



891.99(09)

17045

S-54

Скоропеченье, 1/2

на 100 г. теста

13/10 381

5 563

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

Պրոֆ. Ա. ՏԵՐՏԵՐՅԱՆ

399

# ՀԱՅՈՑ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

XIX—XX դ. դ.

(սղագրված դասախոսություններ)  
ձեռագրի իրավունքով

ՊՐԱԿ II

ՊԵՏԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՈՑ ԵՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

XIX-XX դ.դ.

(ՍՂԱԳՐՎԱԾ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

891.991.09

5-

Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

I

Հովհաննես Հովհաննիսյանը հանդես է յեկել անչալ դարի 80-ական թվականների վերջին: Գրական հասարակայնությունը շատ մեծ ուղարթություն դարձրեց Հրան և Կարճ ժամանակամիջոցում նա խոշոր հայտնի ստացավ:

Ինչով բացատրել այս յերեվոյթը:


Այս յերեվոյթը պետք է բացատրել նախ Հովհաննիսյանի քնարի հասարակական բովանդակությամբ և յերկրորդ այս քնարի գրական արժեքով: Նրա առաջին քննադատներն աշխատում էին ցույց տալ նոր բանաստեղծի կարճ նախորդ խոշոր յերգիչների՝ Ռաֆայել Պատկանյանի, Ծահալիչի հետ:

Հովհաննիսյանն իբրև խոշոր բանաստեղծ վորոշ ազդեցություն է կրել իր նախորդներից և միաժամանակ հանդես է յեկել վորպես ինքնուրույն բանաստեղծ և գրականության մեջ առաջացրել է վորոշ հեղաշրջում:

Ինչո՞ւմն է արտահայտվում այս հեղաշրջումը: Այս հեղաշրջումն ամենից առաջ արտահայտվում է նրանով, վոր Հովհաննիսյանն արձուգանք է տվել Ցուական թվականներին՝ իշխող այն հասարակական-քաղաքական վիճակին, վորը կարելի յե արտահայտել հետեւյալ կերպ՝ գյուղի և քաղաքի մանր բուրժուական խավերի քայքայում: Կապիտալիզմի արշավանքը գյուղում առաջ եր բերում աշխատավորական խավերի տնտեսական քայքայումը. նրանք զաղթում էին դեպի քաղաք, իսկ քաղաքում այս տարրերը քայքայվե-

17015

III  
2227



լով անցնում էին պրոլետարիատի շարքերը : Այս բոլորն առաջ երթե-  
 րում վորոշ դժգոհութիւն, վորոշ անհանգիստ վիճակ : Հովհաննիսյա-  
 նի քնարի մեջ սոցիալական բողոքի այս ձայնը լսվում է : Նրա այն-  
 պիսի գործը, ինչպիսին է « Գլուղի ժամը » վորոշ արտահայտութիւն է  
 այս սոցիալական բողոքի : Հովհաննիսյանը այս գործի մեջ վաշխառու-  
 ական կապիտալի գործած ավերածութիւնն է ցոյց տալիս գլուղում :

Գրիգորը պարտք է վերցրել չի կարողանում այս պարտքը տալ և մեծ  
 պարտատերը քաշում տանում է նրա միակ ապավեն կաթնատու Բիժոն :

Բացի հասարակական տրամադրութիւններից Հովհաննիսյանի գործի  
 մեջ կա նաև այն, վոր նա մեծ շահով ժողովրդական պոեզիան ոգտագոր-  
 ճել է իր ստեղծագործութիւնների մեջ :

Նոր բանաստեղծն ստեղծագործել է ժողովրդական քնարի վոգով :

Այդ կողմից նրա ստեղծագործութիւնների նորութիւնը պետք է հատկապես նշուի :  
 Նրա նախորդներն սուտ, հատկապես Գամառ-Փաթիպախի սուտ, ժողովրդական  
 քնարի ազգեցութիւնը հետին պլանի վրայ է դրված : Հետո պետք է նկատի  
 առնել նաև Հովհաննիսյանի քնարի մի ուրիշ նորութիւնը, այն է վոր Հովհան-  
 նիսյանը հնչեցրեց սիրո յերգերը նոր բովանդակութեամբ և նոր ձեւով :

Մեր գրականութեան մեջ Հովհաննիսյանը հանդես է բերում իրական  
 կնոզը, յերգում է նրա արտաքին և ներքին առանձնահատկութիւնները  
 և համարձակ կերպով հայտնում է իր սերը : Այսպիսի արտահայտութիւնն  
 և բովանդակութիւնն է, վոր մեր բանաստեղծութեան համար վորոշ նորութիւն  
 է, յեթե նկատի շենք առնում մեր միջնադարյան յերգիչներին, վորոնք  
 համարձակ կերպով իրենց սերն են յերգում և այս սերն արտահայ-  
 տում արեւելյան գունագեղութեամբ :

Բացի յերգերի բովանդակութեան խնդրից Հովհաննիսյանի պոե-  
 զիան փայլում է նաև ձեւի կատարելութեամբ : Այս կողմից Հով-  
 հաննիսյանին գովել են այնպիսի խոշոր գրականագետներ, ինչպիսիք են  
 Վալերի Բրուսովը և Կիրպուսիճը : Վ. Բրուսովը հատկապես գո

վել Ե Հովհաննիսյանի ուշագոր Վերաբերմունքը դեպի առաջադասու-  
թյունը:

Առաջին անգամ Հովհաննիսյանի մոտ, մեր նոր գրականության  
մեջ, բանեցվել են պոետիայի գրեթե բոլոր ժանրերը: Նա մեր նոր  
գրականության մեջ այս ժանրերի առաջնագույնը գործադրողն է հանդի-  
սացել: Վորոնք են այդ ժանրերը՝ յերգ, ներբող, ելեգիա, պատմական  
լեզուն, փիլիսոփայական խորհրդածություն: Այս բոլոր ժանրերը Հով-  
հաննիսյանը բանեցնում է ինքնաբուխ կերպով՝ անկեղծ վոգեվորությամբ  
յեկ վոր գլխավորն է ուշագոր Վերաբերմունքով՝ դեպի իր լեզուն:

Նա հանդիսանում է վոճի վարպետ. նրա շարժ, բիթը հետա-  
գայում ընդորինակողներ են ունեցել, նա հանդիսանում է ոսուցիչ  
իրենից հետո հոշակ ստացած մի շարք բանաստեղծների համար:

Նա առաջնակարգ քնարերգու յե նրանով, վոր ստեղծում է նոր,  
աննախընթաց պատկերներ, վորը խորացնում է յուր և յուր հետ միա-  
սին իր հասարակական ամբողջի մտայնությունն ու զգացմունքները:

Յեկ նրա հետ միասին նրա ստեղծագործությունները, նրա բանաս-  
տեղծությունները ունեն ուժեղ յերաժշտություն:

Այս բոլոր առանձնահատկությունների պատճառով հրուսելի Հով-  
հաննիսյանին համարում է մեր նոր բանաստեղծության նահապետը,  
հիմնադիրը: Թեև նա համեմատաբար քիչ է գրել, բայց գրածը պետք  
է ասել, վոր մեծ մասամբ մնայուն գործեր են: Հովհաննիսյանի մա-  
սին կիրպուտիքը հայանել է այն կարծիքը, վոր նա իբրեկ բանաստեղծ  
չատ ավելի ուժեղ է, քան թե իր նշանավոր նախորդները՝ Փամառ Բաթի-  
պան և Շահապիզը:

Հովհաննիսյանի այս բոլոր արժանիքը մեր գրականության պատմու-  
թյան մեջ գնահատել են վոր միայն քննադատները, գրականագետներ-  
ը, այլեկ յերաժիշակները: Եստ հայ յերաժիշակներ, կամպոզիտորներ

որտադրուել են նրա մի շարք վոտանավորները: Առանձնապես պետք է հիշել, վոր նրա քնարը վոգեվորել է հոմիտասին: Նրա ժողովրդականությանը նպաստել է նույնպես այն հանգամանքը, վոր Հովհաննիսյանին վոչ միայն կարդայել են նրա յերգերը, այլեվ յերգվել են:

Հովհաննիսյանը, 1887 թվին յերբ հրատարակեց իր վոտանավորների ժողովածուն, անմիջապես, սրանից հետո, նա դարձավ դպրոցական հեղինակ. այսինքն մի հեղինակ, վորի գործերը տեղավորված են դասագրքերի մեջ: Ինչպես մի ժամանակ Գամառ Քաթիպայի գործերի վրա մի ամբողջ սերունդ է սովորել, այնպես ել Հովհաննիսյանը մի շարք սերունդների համար յեղել է լեզվի ուսուցիչ: Նրա վոտանավորները, վոչ միայն ինքնուրույն, այլեվ թարգմանական իրենց լեզվի, իրենց գեղարվեստական կառարելիության տեսակետից մատաղ սերնդին սովորեցրել են լավագույն հայերեն: Յեվ այս կողմից մի հանգամանք վերին աստիճանի հետաքրքիր է: Դասագիրք կազմողները շատ հաճախ նրա թարգմանությունները դասագրքերում տեղավորում էին, վորպես Հովհաննիսյանի ինքնուրույն գործեր: Արանով նրանք ուշուս էին ասել, վոր Հովհաննիսյանի ինքնուրույն յեվ թարգմանական գործերի մեջ գաղափարական յեվ գեղարվեստական տեսակետից տարբերություն չկա:

Իսպի. յերամիջաններից յեվ դասագիրք կազմողներից նրանով վոգեվորվել են յեվ դերասանները: Հովհաննիսյանը յեղել է նայել ետորագայի բանաստեղծ: Նրա վոտանավորներից շատերը արտասանվել են բեմից յեվ այս բանի համար կարելոր նշանակություն է ունեցել Հովհաննիսյանի վոտանավորների վոչ միայն շերքին բովանդակությունը այլեվ այդ վոտանավորների հնչյունականությունը, յերաժշտությունը յեվ վորոշ վոտանավորների գրամաթիկական կառուցվածքը՝ ինչպես որինակ «Սյունացի իշխանը»:

Հովհաննիսյանն իր աշխատություններով նյութ է տալիս նայել

գիտնականներին, մանկավարժներին, լեզվագետներին և իբրեւ լայ հայե-  
րեն իմացող հեղինակ, իբրեւ լիբրի: Բնույթ գեղարուժ յերբ հարկ է  
լինում այս կամ այն հեղինակի տաղաչափութեան մասին խոսել, կամ  
տաղաչափութեան տեսութեանը տալ, գիտնականներն իրենց որինակները  
վերանում են Հովհաննիսյանի աշխատութեաններէ, վորովհետեւ նրա  
պոնչիան ունի կլասիկական կատարելութեան յեւ կարող է ծառայել  
իբրեւ որինակելի նրմուշ: Վոչ միայն այն, այլեւ վորոշ հմուտ հայա-  
գետներ, քերթականութեամբ պատշաճ անձնավորութեաններ իրենց որինակ-  
ները վերցնում են Հովհաննիսյանի ստեղծագործութեաններէ: Սա-  
նշանակում է, վոր Հովհաննիսյանը լայ գիտե հայերեն, վոր նա գիտե  
վոչ միայն քրաքարը, ոտար լեզուներ, այլեւ մեր բարբառները,  
այսինքն այն բոլոր տառերը, վորոնցից կազմված է մեր այսորվա  
քրական լեզուն: Բայց, ի հարկե, սրաւ կլինի ասել, վոր Հովհան-  
նիսյանի հանդես գալը բոլորի կողմից եւ արժանապաւ հաւասար  
ուշագրութեան:

Իբրեւ խոշոր հեղինակ, վորը բազական համակրանք էր վայն-  
ում ժողովրդի կողմից՝ Հովհաննիսյանն ունեցել է նայել թշնամի-  
ներ: Ունեցել է քննադատներ, վորոնք ուշագրութեան արժանապաւ են  
վոչ թե Հովհաննիսյանի ուժեղ գործերը, այլ նրա թույլ գործերը,  
այսպես ասած նրա գրի վրիպակները: Պետք է նկատի առնել, վոր  
Հովհաննիսյանն այն բանաստեղծների թվին է պատկանում, վորոնք  
շատ վաղ են պատշաճ գրականութեամբ յեւ դեռահաս տարիքում  
բազականաչափ վտանաւորներ են գրել յեւ բնական է, վոր Հովհան-  
նիսյանի վտանաւորների մեջ կան յեւ այնպիսի կատրներ, վորտեղ  
Հովհաննիսյանը գեռ հասարակայնորեն յեւ գրականութեան տեսակետից  
ինքն իրեն դեռեպա շեր գտել: Ահա այսպիսի մի շարք վտանաւոր-  
ների վրա յե, վոր կանգ են առնում այդ քննադատները, նրա տեղը

գրականութիւն մեզ վորոշելու համար ներգրութեան մեկն է Լեւոն,  
վորը պատանի բանաստեղծի «Յերկու ճանապարհ» վտանաւորը  
հիմք ընդունելով՝ քննադատում է նրան, յեզ գրական պատմութեան մեզ  
արժեքաւորում է Հովհաննիսյանին այդ վտանաւորով յեզ ասում է, վոր  
հեղինակը մնացել է յերկու ճանապարհի առաջ կանգնած յեզ չի իմա-  
նում. վոր ճանապարհը ընտրի. Հովհաննիսյանի այս տատանումը վորը  
մեզ համար շատ հակամարտ է նկատի առնելով նրա հասարակական  
յեզ քաղաքական այս ճանաչակարգի սրամտորոշումը, Լեւոնի հա-  
մար դառնալով է բարոյական հանցագործութիւն յեզ այստեղից էլ յեզ  
նեղով քննադատը պատճում է բանաստեղծի վոր միայն հասարակա-  
կան քննարկ, առեւ նրա սիրտ յերկու վորոշ բացատրական քննադա-  
տութեան յերկրկնելով: Կոմիւնիզմը դուր չի յեկել Հովհաննիսյանի  
գյուղասիրութիւնը, հատկապէս «Գյուղի ժամը» վտանաւորը: Յեզ  
դժբախտաբար Հովհաննիսյանն իր յերկու յերկուորը հրատարակու-  
թան ճանաչակ այս վտանաւորը հանց: Գուցէ վորոշ չափով ա-  
բացատրվում է նրանով, վոր նրա քննադատներին, հատկապէս հայա-  
նի մանկավարժ Ա. Մանդիսյանին դուր չի յեկել այս վտանաւորը:

Ինչո՞ւ պետք է բացատրենք Հովհաննիսյանի քննադատների  
վտանայ դժգոհութիւնը: Երբեքայ քննադատների դժգոհութիւնը Հով-  
հաննիսյանի նկատմամբ պետք է բացատրել վորոշ հասարակական,  
քաղաքական պատճառներով: 30-ական թվականներից հայ պոեզիայի մեզ  
յեզ առ հասարակ հայ գրականութեան մեզ նկատում էր դեմոկրատական  
խաղեր. ներկայացուցիչների առջի գարնանը, յերկու յեզ մյուս կողմից  
յերկու յերկու. Ժողովուրդը սկսել էր նկատել: Մեր պոեզիայի մեզ  
ազնի մտեղացել էր նախնիսյանի սիրտը, դեմոկրատական, ժողովրդա-  
սիրական բանաստեղծութիւնների գիծը: Ինչն է պատճառը, վոր Հով-  
հաննիսյանի պոեզիան դուր չի գալիս յերկու քննադատներին:

Սովերից առաջ պատճառն այն է, վոր Հովհաննիսյանը դժգոհ է թուրքական հասարակարգից: Նրա բանաստեղծութիւնների մեջ շատ վորոշ արտահայտված է նրա պատուը մեծատունների վերաբերյալ, այն մեծատունների, վորոնք շահագործում են աշխատավոր ժողովրդին յեվ միայն բարեգործութեան միջոցով փոքրիկ փղբանքներ են տալիս նրան:

Հովհաննիսյանի այս դժգոհութիւնն արտահայտված է գեղարվեստորեն նրանով, վոր նա դժգոհելով Ներկայից կամ խուսափում է իրականութիւնից կամ յերգում է ապագան: Ի հարկ է, այս տեսակետից նրա քնարը չէր կարող դուր գալ նրա քննադատներից վոմանց:

Հետո Հովհաննիսյանի քնարի մեջ շատ ուժեղ չափով շեշտված է ժողովրդասիրութիւնը. միևնրեռ նա առում է մեծատուններին, որոս հակառակ նա սիրում է աղքատներին, շքաւորներին: Յեվ այս կողմից շատ բնորոշ է նրա վրտանաւորներից մեկի մի քառյակը.

« Եւ անգլխատութիւն յես սիրելի,  
 Խեղճի լացը, հարաւանք  
 Յես քնարս նվիրելի  
 Վիշտ յերգելու և աննշանք »:

Շատ բնական է, վոր Հովհաննիսյանի աղքատութիւնն սիրելը վոր թէ պատահական մի յերեմոյթ է նրա ստեղծագործութեան մեջ, այլ վորոշ քաղաքական դրոշ է: Յեվ սկսնակ Հովհաննիսյանի համար բնորոշ է, վոր նա մեք գրականութեան մեջ համարձակ կերպով իրեն համարու է աղքատների դրոշակակիրը, ուստի նրանից թժգոհում էլին լիբերալ քննադատները, վորոս հետեւի նա փոխանակ վորպես նոր բանաստեղծ լիբերալների կողմն անցնելու, նա սիրեն դարձնում է « քամիկի յերգիլ »:

Ճողովրդասիրութիւնը Հովհաննիսյանի մտտ վոր միայն թովանդակութիւն է, այլեւ վոճ. նա իր արտահայտչական ձեւերով, իր

ստի՛նք քրահանութեան մեջ ժողովրդական արտահայտութեան ձեւեր,  
ժողովրդական բառապաշար և բերում: Եւ՛յ սա շատ հասկանալի յե.

Հովհաննիսյանն ինքը գյուղացու վորդի յե, Բանուկ հաս-  
կից նրան հարապատ և բարբառը, յե՛ւ Յա հայերն գիտե վոչ  
թե գրքերից, այլ ժողովրդի բերանից: Բարձրագույն կրթութեան  
ախարհերուց հետո՝ վերագրանալով վաղարշապատ, տասնյակ տարիներ  
մնալով հայրենի գյուղում, այս հանգամանքը պատճառ և դառնում,  
վորպէսցի նա իր ստեղծագործութիւնների մեջ միշտ վառ ու բորբոք  
պահի ժողովրդական ստեղծագործութեան կրակը ողախը: Մյուս կող-  
մից նրա մանկավարժական պաշտոնը, ուսուցչութեանը հնարավորու-  
թիւն են տալիս նրան մոտ լինել վոչ թե մի բարբառի, այլ բոլոր  
հայ բարբառներին, վորովհետե՛ւ նրա աշակերտները գալիս ենին  
մեր յերկրի բոլոր անկյուններից յե՛ւ բերում ենին հայ բոլոր բար-  
բառները հնչեցնում հեղինակի ականջին:

Այնուհետե՛ւ լիբերալ քննադատութեանը դուր չե՛ր գալիս  
նայել Հովհաննիսյանի ստեղծագործութեան մի բնորոշ կողմը: Հենց  
այն կողմն վորով նա տարբերվում էր Գամառ Բաթիպայից ակելի-  
շատ շահով յե՛ւ Եա հայիսից ավելի քիչ շահով: Սա այն էր, վոր  
Հովհաննիսյանի մոտ չկան մարտական նացիոնալիստական զոյթիքներ  
յե՛ւ ուսարապայագութեանը: Այսինքն այն, ինչ վոր ակելի մեն շահով  
կա Գամառ Բաթիպայի մոտ յե՛ւ ակելի քիչ շահով Եա հայիսի մոտ

Եթե՛ Հովհաննիսյանը վորոշ շահով ոգտագործել է իր նա-  
խորդների հայրենասիրական քնարը, ապա նրա հայրենասիրու-  
թիւնը յերթեք չի ստացել թթու ապգայնական գունավորում:

Հովհաննիսյանի ամբողջ ստեղծագործութեանների մեջ մի հատ  
վիրավորական բառ չե՛ք գտնի մեր հարեւան ժողովրդների՝ յե՛ւ  
տաճիկների, յե՛ւ աղբբեզանցիների, յե՛ւ վրացիների վերաբերյալ:

Յեւ բնական է, վոր այս տեսակետից նրա քնարը վորոշ քննադատների համար պետք է խորթ թվար: Այս կողմից Հովհաննիսյանի յերեկան գալը նշան է, վոր Անդրկովկասի ժողովրդների մեջ դեմոկրատական տրամադրութիւններն սկսել են ինչ ճանապարհ քայ անել յեւ Հովհաննիսյանը հանգիստանում է այս ճանապարհի ուղեկիցը: մենք վերեւում ասեցինք, վոր Հովհաննիսյանի սիրո յերգերը նրա քննադատներից վտմանց դուր չի յեկել, որինսկ - Ալեքսանդր Բալանժարյանին, վորը մի մեծ քննադատութիւն է գրել «Մուրճ»-ի մեջ: Այստեղ նա Հովհաննիսյանի սիրո յերգերը համարում է վաճառող, կրքոտ հնչուներ արձակող:

Այս կեղծավոր բուրժուաչիան, վորն իր տիրապետութեան որոշ շատ խոշոր շահով սեռափան սանձարձակութիւնների առաջ դնելու քայ անում, այդ նույն բուրժուաչիան յերբ գրում էր սիրո մասին դառնում էր կուսական յեւ ամոթխած: Հովհաննիսյանի ստեղծագործութեան մեջ այնպիսի վաճառողութիւն, ինչպիսին քննադատներն են ասում՝ առկա չէ: Այդ յերգերի մեջ կա պայամունք, համարձակութիւն: Ժողովուրդը բուրժուաչիայից տարբերվում է նրանով, վոր նա իր պայամունքները չի կեղծում յեւ բոլոր առարկաներին տալիս է իր անունը: Յերթ Հովհաննիսյանի յերգած սերը վառ է ու բորբոք, պատճառն այն է, վոր նա սրտից է գալիս, վորովհետեւ իրականութեան մեջ այս սիրտը վառվում է յեւ սա պայամունքների թարմութեան նշան է: Ամենից առաջ Հովհաննիսյանի «Յերգ» անունով բանաստեղծութիւնը վորոշ տեղիք է տվել «աշխատական» սեր նկատելու, քայ յերբ այս յերգը մենք համեմատում ենք միջնադարյան յերգիչների՝ Բուշակի, Գրիգոր Ախթամարցու, Հովհաննես Թուլկուրանցու սիրային յերգերի հետ, տեսնում ենք, վոր դա իր պատկերավորութեամբ, իր արեւելի-

յան գունագեղութեամբ վոր միայն հիշեցնում է հայ միջնադարը, այլեւ հարեւան. ժողովրդների որինակ՝ պարսիկների միջնադարյան յերգերը: Միտո յերգերի մեջ յեղած այս կապը ժողովրդական բանաստեղծութեան հետ շատ բնորոշ է Հովհաննիսյանի ասեղծագործութեան համար:

Հովհաննիսյանի ուսեղ կողմը ստեղծերի տակ թողնելով՝ բարձրուական քննադատներից վումանք գովել են Հովհաննիսյանին « Ավերակ »-ը, « Ավետարան »-ը սա ցույց է տալիս, թե բարձրուական քննադատութիւնն ինչ է պահանջում Հովհաննիսյանից, քայքայ բարեբախտաբար Հովհաննիսյանը չ'զնայ այդ քննադատների ցույց տված ճանապարհով յեղ իր կապը չկարեց ժողովրդական, դեմոկրատական խաղերից: Յեղ հենց այս է պատճառը, վոր ամենայն անկեղծութեամբ յեղ սրտագին ձեւով նրան գովել են դեմոկրատական քննադատները, ինչպես որինակ Ղապարոս Աղայանը, Լրթանես Փափազյանը յեղ այլն:

Այս քննադատները ինչո՞ւ համար են գովում Հովհաննիսյանին: Ատել չի ուզի, վոր առաջին հերթին նրանք շեշտը դնում են ժողովրդայնութեան վրա: Ղապարոս Աղայանն ասում է, վոր բանաստեղծը պետք է հանդիսանա ժողովրդի լեզուն յեղ նա գածում է, վոր հենց այս լեզուն հանդիսանում է Հովհաննիսյանը: Աղայանը, վոր ինքը դեմոկրատական հեղինակ է, շատ լալ գիտե մեր ժողովրդի մտածումները, նրա հոգսերն ու պապերը, վոր հրաշալի կերպով ձանոթ է փոխկրորին, ձանոթ է միջնադարյան յերգերին, վոր շատ լալ գիտե հայ բարբառները, վոր մեր գրականութեան մեջ լեզվի տեսակետից որինակելի յէ: Այս Աղայանը շատ մեծ խանդավառութեամբ վողջունում է Հովհաննես Հովհաննիսյանի հանդես գալը: Ղապարոս Աղայանը գովում է Հովհաննես Հով-

հաննիսյանի և զուրգայնութիւնը: Այնուհետև յերկրորդ նորութիւն  
 քա մեր պատմութիւնն նոր տեսանկյունով նայելն եր  
 պատմական անցյալի նկատմամբ Հոյհաննիսյանը հանդես է  
 գալիս նոր մտածելակերպով յեկ պատմական արժեքները նրա ստու  
 ստանաւ են նոր դուռնաբացում: Յա իր քաղաքագործութիւնների  
 համար վերջնում է այնպիսի թեմաներ, վարուիք արիւղների կողմից  
 քանկերկան են, ծածման են յեկ ապիս է այդ ծածման թեմա  
 ներին նոր յերանգաւորում: Այստեղ նա իր այս կողմով հիշեցը  
 նում է մեկ Գեորգիին:

Գեորգին ասում է «յես սիրում եմ ծածման թեմաներ, շատ  
 բաներած թեմաներ, վարուիքեմեկ այս թեմաների մեզ կերեկա  
 թե վորն է իմ ինքնուրույնութիւնը: Յեկ սրա համար նա վերջը  
 նում յեկ գրում է «Ճառաստ»-ը վորի. նյութը շատերն են ոգտա  
 գործել, բայց Գեորգիի «Ճառաստ»-ը վոր մեկի հետ չի կարելի  
 փոխա գցել: Այնպես էլ Հոյհաննիսյանի «Արտավազ»-ը:

Շատերն են գրել այդ թեմայի շուրջը բայց Հոյհաննիսյա  
 նի «Արտավազ»-ը չի կարելի փոխա գցել վոր մեկի հետ:

Հոյհաննիսյանի մաս պատմական անցյալին նոր հայացքով  
 նայելը ցույց է տալիս նրա գծագրութիւնը ժամանակակից հասարակա  
 կարգի դեմ: Այսպես են վարել նա, եւ Մարտիանու Փափալյանը:

Թէ Մարտիանո յեկ թէ Փափալյանը «Մշակ»-ի դեմ գրել են  
 յեկ նրա կողմից հաշմեկել, այնպես էլ Հոյհաննիսյանն է գրել  
 հակամշակակից պատմա հայնորութիւնը:

Յերրորդ կողմը, վորի համար գեմեկրատական գննադատները  
 գովել են Հոյհաննիսյանին, սա Հոյհաննիսյանի մաքուր հայերեն  
 լեզուն է: Յեկ առաջին անգամ նրա յերգերը գասագրեցրում  
 մայնողները հաշի յեն ասել այդ հանգամանքը: Գլխավորապես

Ղապարոս Աղայանը իր մայրենի լեզվի միջոցով առաջին անգամ խո-  
 ղոր ժողովրդագիտությունն է պարզեցնել Հովհաննիսյանին: Վերոպհե-  
 տեվ Ղապարոս Աղայանի գառազրքերը շատ տարածված էին,  
 այդ պատճառով էլ շատ կարճ ժամանակամիջոցում Հովհաննիսյանը  
 ժողովրդագիտություն վայելեց: Ինչպես ասում են, նա գարնալ գրու-  
 րույական հեղինակ: Ռա շատ հապվագյուտ բան է. շատ քիչ հեղի-  
 նակներ կան, վոր սկսնակ լինելով հանդերձ քառնում են գարո-  
 ւական հեղինակ: Հովհաննիսյանը վոր միայն ինքնուրույն յեվ  
 թարգմանական գործերի համար դպրույական հեղինակ դարձալ,  
 այլև իր լեզվի համար: Հովհաննիսյանի լեզուն Ղապարոս Աղա-  
 յանը ընդին պակասություններով համարում է որինակելի:

Հովհաննիսյանի լեզվի մեջ գրաբարի վորոշ ազդեցություն յե-  
 րեվում է: Հովհաննիսյանի լեզվի մեջ կլասիկ բրահամության  
 շունչը կա: Նա վորոշ որինակներ է բերում Հոսեթրուսից, Աստվա-  
 ճաղնից, նրա լեզվի մեջ յերբեմն վորոշ կրոնական մտայնության  
 տարրեր յերեվում են, միասիկական վորոշ արտահայտություններ ունի:

Բայց և այնպես նրա լեզվի վորակն այս թերությունների մեջ  
 չի, այս թերություններով հանդերձ, Հովհաննիսյանը մնում է լեզվի  
 վարպետ յեվ նրա լեզվի վորոշ տարծրն ոգտագործելի յեն մեր  
 սկսնակ գրողների համար:

Այժմի ոգտագործելի յեվ որինակելի յե Հովհաննիսյանի ա-  
 ղաղափությունը: Հովհաննիսյանը, ինչպես քիչ առաջ ասեցինք,  
 Բրյուսսելի կարծիքով աղաղափության առաջնակարգ, խաղոր վար-  
 պետներից մեկն է: Նա իր վտանագործների յերածդասականությամբ  
 կարող է ուսուցիչ լինել սկսնակ գրողների համար, ցայց առ  
 նրանց թե ինչպես պետք է վորոշ վերաբերվել գեղի գրչամբի  
 տեխնիկական կողմը: Վումանք վտանագործների արտաբերելով

յերկար պրոզայիչ, սխալմամբ համարում են կորը առշանգի նշան

Մեր լափագույն գողներն իրենց յերկար ու քրանազան աշխատանքով հանդերձ գրականության մեջ հանդիսանում են խոշոր վարպետներ: Մի վերջին խնդիր էլ լեզվի վերաբերյալ այն է, վոր Հովհաննիսյանը գտնու է, ինչպես յեվ Թումանյանը, վոր մեր գրական լեզվի համար ամենամեծ շտեմարանը պետք է հանդիսանան մեր բարբառները յեվ նա շատ դժգոհում է այն հեղինակներից, վորոնք խուսափում են բարբառներն որոտագործել:

Քննադատների մի մասն էլ Հովհաննիսյանի ամենից ուժեղ կողմը համարում է նրա սիրո յերգերը: Հակառակ մի շարք քննադատների պնդումների, դեմոկրատական քննադատները Հովհաննիսյանի սիրո յերգերը համարում են վոչ թե վավաշու, այլ առաջնակարգ յերգեր յեվ նրան խաղում են հայ միջնադարի լափագույն առաջապների հետ. որինակ՝ Բուչակի յեվ գտնում են, վոր Բուչակի յերգած սիրո յերգերի պես Հովհաննիսյանի յերգերն էլ գվարթ են յեվ ձեվով կատարյալ, վոր սրանց մեջ նա հանդես է բերում մեծ անկեղծութուն և անմիջականութուն:

Հովհաննիսյանի ստեղծագործությանն առավելությունը համարվում է նույնպես Հովհաննիսյանի յերգերի մեջ ճափալած մարդասիրական զգայմունքները, մի մարդասիրություն, վորն սկզբունքորեն տարբերվում է Գամառ-Բաթիպայի արտահայտած ոտարատյայ քանոտեղծութուններից: Այս մարդասիրությունը քարոզում է « խեղճ յեղբոր » ոգնել, բարեգործություն անել:

Հովհաննիսյանի բարեգործության իդյալը հանգում է Մուրացանի քարոզած սոցիալական ուտոպիային:

Մուրացանի մոտ քույր Աննան իր ամբողջ հարստու-

Ռյունը նվիրում է իր գյուղացի յեղբայրներին: Հովհաննիսյանն  
 էլ քարոզում է բարեգործություն, աղքատին ոգնել, աղքա-  
 տին պաշտպանել յեզ ալն: Ինչպես տեսանք, Հովհաննիսյանին  
 գրական հասարակությունը բավական գրկաբաց ընդունեց:

Նույնիսկ բուրժուական քննադատները չէին մերժում  
 նրա տաղանդի առկայությունը: Մի քան պետք է շեշտել,  
 վոր Հովհաննիսյանի գրական բեմյելը շատ ավելի ցնձագին  
 ծափերով ընդունվեց, քան թե նրա կյանքի վերջին յերկու  
 տասնամյակը: Այս կողմից նրան կարելի յե համեմատել քեր-  
 մանական գրող Զուդերմանի հետ: Մրան էլ շատ մեծ իան-  
 դավառությամբ ընդունեցին, բայց կյանքի վերջում նա  
 գրեթե կրիսամոռացված վիճակումն եր գտնվում:

Այս հանգամանքին հայ բուրժուական քննադատները  
 ավել են վորոշ կանխակալ բացատրություն: Այն է վոր նրա  
 ստեղծագործության ուժը իր առաջին գրքերի մեջ է, հետա-  
 գայում իբր թե նրա քնարը մարել է: Այս տեսակետը սխալ է,  
 յեզ պետք է ասենք, վոր Հովհաննիսյանի ստեղծագործությունը  
 յերբեք կանգ չի առել, սա պարզ յերեվում է նրա ժողովրդա-  
 կան քնարից:

Հովհաննիսյանն իբրեզ ժողովրդական յերգիչ վոգեվոր  
 վել է իր կյանքի վերջին տասնամյակում, հետեվապես շի կա-  
 բելի ասել, վոր նրա ստեղծագործությունը մարել է իր առա-  
 ջին ժողովածուից հետո: Այնպիսի քննադատ ինչպիսին է  
 Կեոն, Հովհաննիսյանի այս « մարած գրությունը » նշելով՝ թերա  
 գնահատում է Հովհաննիսյանի ժողովրդական ստեղծագործության  
 արժեքը: Յեզ սա շատ բնական է, այս քննադատի համար:

Հովհաննիսյանի ուսումնասիրությունը մենք բաժանում

ենք հետեւեալ մասերի 1/ Հովհաննիսյանի ժողովրդական քնարը, 2/ Հովհաննիսյանի պատմական քնարը, 3/ Հովհաննիսյանն իբրեւ սիրոյ յերգիչ, 4/ Հովհաննիսյանն իբրեւ թարգմանիչ յեւ 5/ Հովհաննիսյանի կրած յեւ թողած պոէզիոսթյունները:

## II

Ճնշեմք առաջին խնդրին՝ Հովհաննիսյանի ժողովրդական քնարին, վորն առաջին հերթին գնահատել է Գալարոս Աղայանը: Նա գնահատելով Հովհաննիսյանին, տալիս է մի շատ ճիշտ թեւ, թե բանաստեղծը ժողովրդի լեզուն է: Արանով իսկապես Գալարոս Աղայանը համաձայնվում է Մարտիմ Գորկու հռչակվոր տեսակետի հետ, վոր ամեն մի խոշոր բանաստեղծ անպայման ժողովրդական ստեղծագործութեան հողի վրա յե բարձրանում, վոր բոլոր խոշոր, համաշխարհային ստեղծագործութեանները ժողովրդական ծագում ունեն:

Հովհաննիսյանի արժեքը մեկանում առաւելապես բարձր է նրա համար, վոր նա անդրանիկ բանաստեղծն է, վոր ժողովրդական վոզով յերգեր գրեց: Այնպիսի յերգեր, վոր ժողովուրդն իրն եր համարում այդ յերգերը, յեւ շատ անգամ վարմանում են յեթե առում ես թե սա Հովհաննիսյանն է գրել:

Ճիշտ է, առաջին անգամ ժողովրդական բանաստեղծութեան արժեքը, մեր գրականութեան մեջ, շեշտել է թաշատուր Արսլանը իր «Վերք Հայաստան»-ու հառաջաբանի մեջ, բայց հատկապես տառաչափական արվեստի մեջ Հովհաննիսյանն առաջին հեղինակներից է, վոր ժողովրդական պոետիան տաղանդավոր կերպով ոգտագործել է յեւ այս ուղղութեամբ ունեցել

մի շարք աշակերտներ, ինչպիսիք է Ավետիք Իսահակյանը:

Բայց ի հարկե սխալ կլինե՞ր Հովհաննիսյանի ժողովրդա-  
կան քնարը սահմանափակել միայն գյուղական յերգերով,  
այնպիսի յերգերով, վորտեղ նա խոսում է գյուղացիների, գեղ-  
ջուկների մասին: Բելինսկին մեզ սովորեցրել է, վոր ժողովրդա-  
յանությունն արտաքին յերեվույթ չէ, սա պետք է թշխի քա-  
նաստեղծի ստեղծագործական ակունքից: Յերթ վտանագործի  
մեզ բարբառը տեղ է գտել, սա դեռ նշան չի, վոր այդ  
վտանագործ իր մեզ ժողովրդայնություն է կրում: Յե՛վ ընդ-  
հակառակը: Արինակ յերթ մենք վերցնենք Հովհաննիսյանի  
«Հատիկ»-ը, վորը շատ մաքուր գրական լեզվով գրված  
մի բանաստեղծություն է, վորը բարբառի տարրեր չի կրում  
իր մեջ, բայց յե՛վ այնպես ամբողջ վտանագործը հագեցված  
է ժողովրդայնությամբ:

Այդ վտանագործը ցույց է տալիս, թե վոր դարաշրջա-  
նի գյուղացին է խոսում, ինչ հարաբերության մեջ է այդ  
գյուղացին դեպի հասարակական կարգերը յե՛վ այլն: Արինակ  
վերցնենք այդ վտանագործի առաջին տունը:

Լույսը քաջվում է, շուտ արտը գնամ,  
Պատուեմ սուր խոփով յես կարճըը հողի,  
Իմ սիրուն հատիկ, քեզ նրան պահ տամ,  
Մի՞նչե՛վ որե՞րը ամուսն արե՛վի:


Ինք տեսնում ե՞ք, վոր այս հորս տողի մեջ գյուղացին  
խոսում է միանգամայն մաքուր, գրական լեզվով, բայց միա-  
ժամանակ նրա արտահայտած մտածությունը համապատասխա-  
նում է վորոշ դարաշրջանի գյուղացու հոգն, անուրջյունը և  
միանգամայն սաղական է այդ գյուղացու հասարակական

A 2097  
11

չարգայման համար: Այդ հասարակական մտածությունը, այդ մտածության հարապատ արտահայտվելն է, վոր աչքի յե ընկնում է չոզհաննիսյանի մոտ յեզ ցույց է տալիս, վոր շե- նայան վտանակավորը գյուղացու բարբառով չի գրվան, բայց նա վերին աստիճանի ժողովրդային է:

Պետք է ասինք, վոր չոզհաննիսյանի քննադատներից վո- մանք նրա ժողովրդական քնարը թերագնահատելով հարվածել են նրան, թե ինչու նա ազգայնական յերգեր չի գրել, այլ բա- վականացել է նեղ, գյուղական յերգեր գրելով, ինչպիսին է « Գյուղի ժամը »: Այս քննադատներից մեկը հայտնի մանկա- վարժ Մեգրակ Մանգիթյանն է: Բայց բացերախառբար չոզ- հաննիսյանն իր այս քննադատին շլտեց յեզ հետաքայլում ա- վելի ուժեղացրեց իր ժողովրդական քնարը: Վերջի վերջո նրա լավագույն ժողովրդական գործերն ստեղծագործվել են « Գյուղի ժամ »-ից հետո: Ինչո՞ւ պետք է բացատրել չոզհաննիսյանի այս ժողովրդական թեքումը: Թերիշ խոսքով ինչո՞ւ պետք է բացատրել նրա ժողովրդական քնարի հասարակական, քաղա- քական գրգռապատճառները: Անպայման առ մի նշան եր, վոր 80-ական թվերի վերջերին արդեն Անդրկովկասի հայ դեմոկրատիայի մեջ վորոշ հետաքրքրություն եր առաջացրել դեպի հասարակական գործը յեզ մյուս կողմից լիբերալ բուրժուազիայի, մշակականու- թյան հեգեմոնիան սկսել եր տեղի տալ: Աշխարհականությունը իրո- նանում եր վորպես հասարակական յերեվույթ յեզ դեմոկրատիայի իրավերի այս աշխուժացումը բացատրվում եր այդ նույն քաղաքա- կան հոսանքի վարելով:

Ի հարկե, բացի այս որչեպով պատճառներից այստեղ կա- յեվոր նշանակություն ունի յեզ բնաստեղծի անճնայությունը: Նա



գյուղացի յե, չբավոր գյուղացու զաւակ: Կենսագրութիւնից հայտնի յե,  
 վոր նա հնարավորութիւն չի ունեցել իր հոր գրամներով բարձրագույն  
 ուսում ստանալու, վոր դիմել է Լազարյան ճեմարանին, վորպեսպի նա  
 ընդունվի այստեղ վար: Ես թողակառու: Այնուհետեւ բնորոշ է նայել  
 այն, վոր նրա գրական գործերն սխում են լայն տեսնել հենց նրա  
 ուսանողութիւն շրջանում Լազարյան ճեմարանի «Լույս» անունով  
 աշակերտական թերթի մէջ: Նրա յերգերի առաջին ժողովածուն հրա-  
 տարակցել է նրա ընկերների կողմից: Նրանք կոպեկ կոպեկ փող  
 են հավաքել յեւ իրենց ընկեր բանաստեղծի գործերը հրատարակել:

Այս հանգամանքը ցույց է տալիս, վոր Հովհաննիսյանի  
 յերգերի թե բովանդակութիւնը յեւ թե ձեւը մեր ժողովրդական  
 խաղերի համար ընդունելի յեւ սիրելի յե յեղել, վորովհետեւ  
 Լազարյան ճեմարանի ուսանողների մեծ մասը մեր գաղափար-  
 րից էլին:

Հովհաննիսյանը իր ժողովածուն հրատարակել է 1887 թվին.  
 այդ ժամանակ նա 23 տարեկան եր /Յնվել է 1864 թվին/. Նա  
 գրել է շատ վաղ հասակից: Հետո նրա հաշակի յեւ գրական հարս-  
 տութեան մասին գաղափար տալու համար պետք է նրա կենսագրու-  
 թիւնից հիշատակել մի փաստ, սա այն է, վոր Հովհաննիսյանը  
 ինչպես յեւ Աբովյանը սիրել է ժողովրդական զնարթ արթիւնք-  
 ները հաւաքել թուն ժողովրդից, գաղափարը համապատասխանելով:

Այսպես որինակ Հովհաննիսյանը Սուրմալի կողմերը համա-  
 պարհորդելով հաւաքել է ժողովրդական և աշուղական յերգերը:

Մեր հեռուի տակ այժմ կան այգայիսի մի շարք հաւաքան  
 նյութեր, վորք հրատարակված չի և պետք է վոր անգայման  
 Պետհրատը հրատարակի:

Լեոն իր գրականութիւնի պատմութիւն մէջ բերում է

Հովհաննիսյանի պատանեկական շրջանում գրված մի վոտանավորը  
 «Յերկու Ճանապարհ» վերնագրով, ուր բանաստեղծը խոսում է  
 յերկու տարբեր, հակառակ ճանապարհների մասին, վորոնցից  
 մեկը տանում է դեպի վայելք, մյուսը գրտնաղան աշխատանք:

Լեոն ասում է՝ մինչև այսօր, այսինքն միջև 20-րդ  
 դարի սկիզբը, /1894 թիվը/ բանաստեղծը չի վորոշել թե՛ վոր  
 ճանապարհն է ընտրում: Սա սխալ է: Նա իր ճանապարհն ընտրել  
 է, ուսուցիչ է, շարունակ ապրում է գյուղում, նա դաստիարա-  
 կում է յերեխաներին, կապված է գյուղացիների հետ, վերջա-  
 պես իր ստեղծագործությունների մեջ էլ նա կապված է ծույն  
 գյուղացու ցավ ու դարձերի հետ յեվ իր գործերի մեջ վորել է  
 կերպ չի դրվատել այս կամ այն հարուստին: Նույնիսկ այն  
 լամանակ, յերբ նա վորել է կարծիք է հայտնում հեղինակների  
 մասին, ինչպիսին է Գամառ Բաթրայան յեվ Շահապիլը, նա  
 գովում է այս հեղինակների մեջ նրանց այն կողմը, վորն իրեն  
 հայտնի է համընկնում է:

Նա Գամառ Բաթրայայի նացրոնայիցը չի դրվատել: Նա  
 խոսել է յեվ համակրանք է հայտնում Գամառ Բաթրայայի  
 ժարգատիրական գաղափարների նկատմամբ: Յեվ այս բոլորը  
 նշան են, վոր Հովհաննիսյանն ունեցել է վորոշ աշխարհայացք,  
 վորոշ տեսակետ, վոր նա յերկու Ճանապարհի մեջ չի տա-  
 տանվել: Յեվ յերբ քննադատներն անտեսում են այս բանը,  
 սա նշանակում է, վոր նրանք թերագնահատում են Հովհաննիս-  
 յանի ստեղծագործության ժողովրդական թնույթը: Ասում են  
 Հովհաննիսյանը թիչ է գրում, բայց թիչ գրելը նշան չի տալան-  
 որի բացակայության յեվ այս տեսակետից Լեոն սխալվում է:

Ձիշտ է, Հովհաննիսյանը համեմատաբար թիչ է գրել քան

Լեոն, բայց նրա գրգռմանը պետք մնայուն են, քան Լեոնի բոլոր հա-  
տորները միասին վերցրած:

Այնուհետև պետք է նկատի առնել նախել Հովհաննիսյանի  
չարքաշ կյանքը: Այս կողմից մենք բավականաչափ նյութեր ունենք  
նրա գրած նամակներում, վորոնք դժբախտաբար լույս չեն տեսել:

Այս մի շարք նամակներից մենք տեսնում ենք լծե ինչպես  
նա իր սիրտը բաց է անում, մանավանդ յերբ նա նամակ է գրում  
իր սիրելի հեղինակներին, որինակ Թումանյանին և նա չի թաղար-  
նում իր վիճակը, վոր նա ապրում է շատ դժվար պայմաններում,  
նրա համար ամենամեծ պալը ինչպես յել Մուրադյանի, յեղել է այն,  
վոր նա չի կարողացել գրականությանը նվիրվել: Մուրադյանը պատմում  
է, վոր յերբ իր հաշվապահական գրքերը կշռել պետք 12 փութ ձան-  
րություն ուներ յել ասում է, յերե աչքան գրելի գրականության  
համար մեծ հաճույք կլիներ ինձ համար: Այս նույն բանն հա-  
մարյա ասում է նախել Հովհաննիսյանը Թումանյանին գրած իր  
նամակում: Այս պայմանների մեջ էլ պետք է ասել, վոր նա շարու-  
նակում է իր բանաստեղծական պրոդուկցիան: Ի հարկե շատ  
բան նա կարող էր անել, բայց չի արել որինակ - նա ձեռնարկել  
է Հովհաննիսի Թարգմանությունը, բայց չի ավարտել, սա յել բացա-  
տրվում է իր սուղ նյութականով, իսկ կովհասի հայոց հրատարակ-  
չական ընկերությանը վարչությունը չի ապահովել, վորպեսպի  
նա կարողանա այս աշխատանքը ավարտել: Ի հարկե նա  
կարող էր լավ թարգմանել, նա գիտեր հունարեն, լավ գիտեր  
հայերեն լեզուն յել բարբառները:

Հովհաննիսյանի նամակների մեջ մի բնորոշ կողմ էլ կա,  
Հովհաննիսյանի բանաստեղծությունների մեջ կրոնն ու յեկեղե-  
ցին իրստ քննադատության չեն յենթարկվում, ընդհակառակը

նա մի տեղ նույնիսկ գտել է եղջերաներ, բայց իր նամակները  
 մեզ մի քանի տեղ էլ գտայ եւ ապրիլ, վոր եղջերանի մթնո-  
 լորարկ շատ դժգոհ է, ցույց է առնի, վոր այդ միջավայրը թու-  
 րկանող, քնեցնող պղկուցիում է թողնում իր ստեղծագործություն-  
 ների վրա: Այս հոգեկան ապրումները նա կարողացել է  
 իր բանաստեղծական յերկերի մեջ շատ լավ արտահայտել:

Հովհաննիսյանի Գյուղերական վարի համար կարծիքը  
 նշանակալիցում մեր յեզ այն հանգամանքը, վոր Հովհաննիսյանի  
 պատան ստեղծող ինքնու ժամանակ գյուղի յեզ քաղաքի աղիա-  
 ստեղծությունը վիճակը շատ եր ծանր, սրտին նկատելի յեր ինչպես  
 առաջ է Հանրա Գյուղերակն Եւրոպ մեջ աղքատների թիվը հետզ-  
 հետ շատանում է ու Հովհաննիսյանի յերկերի մեջ էլ այս աղ-  
 քատացման պրոպեդ գործը արձանագր է գտել: Այս կողմից  
 շատ թժարող է Հովհաննիսյանի « Գյուղի ծառ »-ը:

Հովհաննիսյանն իր այս ստեղծագործությունները աղքատ-  
 ներին պաշտպանում էր յեզ համակրում: Գյուղացիական այս քայ-  
 քայման պրոպեդն զուգընթաց առող է գալիս պանդխտության  
 յերեկայինը: Յեզ գյուղի ու քաղաքի մեջ շարունակ յերթելիցու-  
 թյան աճող այս գյուղացիների մասին է խոսում Հովհաննիսյանի  
 վեպը:

Հովհաննիսյանն իր ստեղծագործությունների մեջ ստեղ-  
 ծում է հասուն վեճ յեզ պատկերապատկերում: Այս բովանդա-  
 ցական բանարանը մեզ հանաբ հանրագրում էջ հետեվյալ արտա-  
 հայտությունը « Բունակեր թաղում » սա շատ սուր է գալիս այն քայ-  
 քայման մանր բարձունական իտակներին, վորոնք զրկվել ենին իրենց  
 մի կտոր հողից յեզ քայքայում ենին: Երանք բունը կորցրած թը-  
 շունների պես այս ու այն կողմն ենին ընկնում՝ առատանում:

Նրա բանաստեղծության մեջ շատ բնորոշ է նախել «Հողմա-  
վոր նավակ» արտահայտությունը: Նա իրեն հասկենալու է սա-  
ղեղի հետ, վորն ընկնելով ջրի յերեսին, տարուբերվում է: Այնու-  
հետեւ նրա հասկենալու մեթոդից կարելի լինի նշել նախել  
«Յերերուն յեղեց» դարձվածքը: «Վորպես յերերուն յեղեցն առ-  
վակում տեսնում եմ պատկերս»:

Ընթացակամ ընկալողներից վաճառել են, վոր  
իբր թե Հովհաննիսյանին քաղաքական խնդիրները չեն հուզել,  
իբր թե նրա մարդասիրությունը վերացական, անորոշ բնույթ  
ունի: Այս կարծիքն ի հարկե սխալ է: Հովհաննիսյանի ստեղ-  
ծագործության մեջ դեմոկրատիան հսկայական է լիբերալիստիկ:

Այս դեմոկրատիստի պատճառով բանաստեղծը հայաձվել է,  
ամբողջ իր կյանքում յեղել է իբրեւ շարքառ աշխատակոր յեւ  
վոր գրականությունը, ինչպես ինքն է ստում, հայ չի սովել  
իրեն: Բայի սրանից, Հովհաննիսյանի ժողովրդայնության մեջ կհ  
շատ բնորոշ միտում՝ նա աշխատակորության բարեկամն է յեւ  
մեծատունների թշնամին է: Նա ունի մի շարք յեղեց, վորոնք խո-  
րապես թափանցված են քաղաքական մտածողությանը, հատկապես  
1905 թ. կապակցությամբ գրված նրա յերկու բնորոշ յերկերը  
«Յրումեթնոս» յեւ «Վատազնի մնունքը»: Այս իմաստով հերքե-  
վում է այն տեսակետը, վոր վերջին տարիներս արտահայտվել  
է Հովհաննիսյանի ստեղծագործության նիստմամբ այն, վոր  
սոված է, թե Հովհաննիսյանը մեր օրերին վաղիվը չի տալիս:

Չեղթեն ստում է թե՛ «Ուլ լալ է ապրում իր ժամա-  
նակի համար, նա արդեն ապրում է բոլոր ժամանակների  
համար»:

Յերե Հովհաննիսյանի ստեղծագործության մեջ լազա-

պես և անգրագարուն իր եպոսթան, սա նշանակում է վոր նրա  
յերկերը չեն կարող մեզ համար լալ շինել, կամ բողոքում  
անարժեք լինել դա հակառակ է Հեթինյան տեսակետին  
գրական ժառանգութեան հարցի առթիւ :

Այս տեսակետից սխալ է նախել մի այլ կարծիք, վոր  
գրական քննադատներից մեկը արտահայտել է ասելով թե Հով-  
հաննիսյանն անդեմ գրող է: Այս կարծիքն արտահայտել է  
տիրացուական «Հասիա» թերթը յեւ արտահայտողը յերել է մի  
տիրացու Պետրոս անունով: Հովհաննիսյանը վոր միայն անդեմ  
չի, այլեւ նրա ժողովրդական քննարկ մեզ շատ պայտուն կեր-  
պով յերեւում է նախանգյանի շունչը:

Նախանգյանի «Առարյա աշխարհը» յեւ «Մանկութեան որեր»  
բանաստեղծութեանն է մեզ վորող մտքեր յեւ զաղագարներ են  
արտահայտել, վոր շատ մեծ շահով դատարներ է Հովհաննես Հով-  
հաննիսյանի իր բանաստեղծութեանն է մեզ: Հեղինակից պահան-  
ջում են, վորպեսզի նա ուրախ յերգեր, անվիշտ յերգեր յերգի, իսկ  
դեմոկրատ բանաստեղծը տեսնելով շորս կողմի տիրութեանը,  
հրաժարվում է ուրախ յեւ անվիշտ յերգեր յերգելուց: Բանի կա-  
մարդկային դժբախտութեան, նա չի կարող անտարբեր լինել:

Նրա քնարը, ինչպես վերեւում ասեցինք, նրա լեզու պետք  
է լինի ժողովրդի լեզու, բայց ի հարկե մի բան մենք պետք է  
խոստովանվենք՝ դա այն է, վորի մասին շատ վորող կարծիք է ար-  
տահայտել ընկ. կիրպոսիներ: Նա ասում է, վոր Հովհաննիսյանը ազա-  
տագրութեան ըմբռնում է անկասկա դասակարգային պայքարից:

Նա իշխանութեանը տեսնում է, ազգատութեանը տեսնում  
է, բայց ուղիներ չի գտնի տալիս: Սա ի հարկե չի նշանակում ան-  
դեմ լինել, սա չի նշանակում, վոր Հովհաննիսյանը մեր որերի

հանձնարարական զանգուշակում է, վոր Հովհաննէսյանն  
 այն աշխատակարարական խառնիկի ներկայացուցչն է, վորտեք զե-  
 ՛նն ընդգրկելու նախանշանի արժարժան աստարտի, կայնք ուղիւ,  
 յիւր բացի սրանից Հովհաննէսյանի զեմոկրատական յերգերի վրա  
 նկատելի յէ վորոշ կրօնաբարոյական շարժ: Եւ իրար սիրել, քա-  
 ռոյրում է առհասարակ յեղբայրասիրութեան գաղափարը, բայց սրան  
 ասոյն է պատկը կրօնաբարոյական բնակարարութեան:

Եւստի աստիկ գրում գրասեպարի մէջ նա ասում է «Յն-  
 բայր նայնում եմ յիւ իմ թշուառում: Թնչպէս կարծի յէ թշու-  
 առն յեղբայր անկանել, նայնը սեպն է ասել նայնի նոր անկեան-  
 քան: Գրասեպարի մասին: Եւ իրարարեւոյթեան յիւ կրօնական  
 հայրի այս սիրքն անգանում է սրտ զիրք:

Հովհաննէսյանի համար շատ բնորոշ է նրա սրան գրգռաւա-  
 կան խառը Պերն Պառչանի հարձեղանի ասքիւ: Հովհաննէսյանը  
 գովում է հայ զեմոկրատիայի այս խառը ներկայացուցչն, նրա  
 ձիրքը հանձար անկանելու. « Եւ իրարայր շարք հայեր յիւ առ  
 վեցին քո հանձարին: Այն զերս սերը, վոր նա ասեում է Պերն  
 Պառչանի նկատմամբ, ընդհանրապէս բխում է այն շատ անկեան-  
 յերեւոյթից, վոր Հովհաննէսյանը Պառչանին հաւարում է առ-  
 իստակար գրգռաւորութեան շատերի անկեանքերով պաշտպանը:

Հովհաննէսյանը աշխատակարարների մասին խոսելու մի շատ  
 բնորոշ արտահայտութիւնն է գործ անում, աշխատակարարներին ան-  
 վանելով նակատագրի խորի վորդիք: Աս մի բնորոշ արտահայ-  
 տութիւնն է, վորը հեռազայում գործ է անել Անկեանք Բաւհակ-  
 յանը իր գրասեպարներից մեկում « մենք աշխարհի խորի  
 պայակն ենք: մեզ փայ շիւ աշխարհից: »

Այս բայրն ի հարկէ պարզ ցույց է ասելու, թէ ինչու

2.

համար վորչ քննարարներ համեմատ էին Հովհաննիսյանին .  
 վրանք գտնու էին , վոր նա քիչ է գրում յեղ պնդում էին  
 թե գրականության մեջ նա այնչեք սեղ շուծի , շքայել է  
 գրական ասպարեզից , վրանք էլ Հեոյի թերանով հայտա-  
 յարում էին . « Գրած մասանակ էլ մի բան չհաստատ » :

Պէտք է նկատել , վոր շատերն էլ Հովհաննիսյանին  
 սուբլեկարիքապէս քնարի ներկայացուցիչ են համարել ,  
 գտել են , վոր նա անհասկան քնարերգու յե : Իբր թե նրա  
 նախորդները Պաճառ Բարեպառ յեղ նախախը շատ ավելի  
 հասարակական յերգիչ են , քան Հովհաննիսյանը :

Այս կարծիքն ի հարկ է սխալ է : Հովհաննիսյանին իբրև  
 լիրիկ , ինչպես ստուա է Հ. Բրյուսովը , աշխարհիմ նայում է  
 իր անձնական պատուհանից , բայց վերջի վերջո նրա աշխարհը  
 յեղ աշխարհի մասին նրա խոսածն շատ կոնկրետ է : Հենց այդ  
 պատճառով էլ նրա տխրութիւններ վոր միայն անձնական  
 են , այլև ժողովրդական : Նա տխուր է վոր միայն այն պատ-  
 ճառով , վոր ինքը լավ չի արտաք , այլև վոր իր նման  
 շատերը կան , վորանք աշխարհի խորթ վաճակներն են :

Այնպես , վոր Հովհաննիսյանի յերգերն անշուշտ առգոր-  
 ված են հասարակական սրբաճարութիւններով , վորքան էլ  
 նրա քննարարները պանծանան թերազնաստան , այս հան-  
 դամանքը :

Հովհաննիսյանի ժողովրդական քնարի արժեքը  
 ինչքան էլ պանծանան թերազնաստան յեղ աշխարհն  
 սույն սառ , վոր բանաստեղծը յերկար տարիներ գյուղում  
 մնալով դարձել է հեռամտաց յեղ թմրած , այնպէս է նայելով  
 Հովհաննիսյանին իր ժողովրդական քնարի մեծագույն մասն ստեղ-

ճարտրծել է « Այս հետազոտումը յիշ թերան ղյուղում » և վաղ մի-  
այն իր ստեղծարարական բովանդակությունը այնպիսի նյութ  
նակելի լեզուն յիշ ղյուղը պայմանավորված է ջրանոս, վոր  
նա ամուր կապված է ճարտրծի հետ :

Այնպեսովք Մատարյանը , իր նախնիներ յիշ , քանզան-  
վամ է , վոր ինքն շարունակ հետո քանզան ճարտրծի , լե-  
զուն կամայ - կամայ վատեր տակ է արհեստական գաղա-  
լա համար : Իսկ Հովհաննիսյանն իր արարող կյանքն անց է  
կացրել այն ճարտրծի ճայում , վորի կարտար ջաշում է իր  
յերգերում Այնպեսովք Մատարյանը :

Հովհաննիսյանի ճարտրդական թմար լայնատյա նմուշ-  
ներն են « Արապն եկամ լային տալով » , « Աշարայ թարձր  
սարին » « Այ վարդ աղջիկ » « Աղուղ » « Նոր գարուն »  
« Որ ես գալիս այ գարուն » յիշ այլն : Սրանք պետք է համարել  
հայ գրականության գոհարներ , վորոնք վաղ միայն պատկանում  
Նա գրում է այսպես՝

Շող լուսնյակին կույս ու ճաղիկ  
Զիրար գրկեն սիրատարփիկ:

Շեղան պետք է ասել, վոր բնության այն այլ վիճակնե-  
րին բանաստեղծը տալիս է վանազան հասարակական բա-  
ղատություններ: Զմեռը սա անկենդանությունն է նշանակում,  
իսկ գարնան վարթոնքը կենդանության նշանն է, և բա-  
նաստեղծը կուչեյի վրա իր հայրենիքն էլ քնից վարթներ  
գարնան պես:

Վ

Հովհաննիսյանի ստեղծագործության մյուս խնդիրը սա-  
յն է, Հովհաննիսյանին իբրև թարգմանիչ: Հովհաննիսյանի թե-  
թեքմությունն և թե՛ թարգմանական յերկաօրությունն իրար  
հետ շատ սերտ կապ ունեն: Հովհաննիսյանն ասես իր թարգ-  
մանությունների միջոցով լրացնում է ամբողջացնում է  
իր ստեղծագործությունը: Թարգմանությունները նրա համար  
նույնքան թանկարժեք են և գնահատելի, վարթան սեփա-  
կան գործն է և ասեն մի թարգմանություն հրատարա-  
կելու համար հաճախ նա վող մի միջոցի առաջ կանգ  
նի անում: Այսպես որինակ - հիշենք մի րեպր, յերբ

Հովհաննիսյանը թարգմանում էր նեկրասուվի «Նոր տարի»  
վոտանավորը, ցարական ցենզուրան արգելք հանդիսացավ  
նեկրասուվի այս վոտանավորի հայերենը հրատարակելու  
գործին: Յեվ պարզ է, թե ինչու համար էր դեմ: Այստեղ  
հանձարեղ քանաստեղծ նեկրասուվը յերգում է իր հայրե-  
նիքի, Ռուսիայի ազատությունը: Այստեղ նա յերազում է,  
վոր գյուղացու որը դառնա պայծառ և հետևաբար, նա  
գտնում է, վոր այն որը, յերբ նա գրում էր վոտանավորը  
գյուղացու որը խավար է ցարական իշխանության պատ-  
ճառով, և պարզ է, վոր այս քանաստեղծությունը  
ցարական վամպիրները թույլ չենյին տալ, վոր լույս տեսնի:

Յեվ ահա Հովհաննիսյանը դիմում է մի կողմնակի ճա-  
նապարհի, նա այդ վոտանավորն ուղարկում է արտասահ-  
ման, մ.թ.սել քաղաքը և այնտեղ ապագրվում է անբնեխա:  
ժուրնալի մեջ: Այս հանգամանքը ցույց է տալիս, վոր բա-  
նաստեղծի համար իր թարգմանական գործն իրեն սեփական  
ստեղծագործություններին համարվեք են, ինչպես վոր կու-  
լեր իր ինքնուրույն ձայնը հասցնել ժողովրդին, այնպես  
եւ կուլեր, վոր իր թարգմանական ձայնը հասնե՞ր ժողովրդին:

Սա նշանակում է, վոր նա թարգմանությունների մեջ  
անխորական չէ այսինքն - ամեն բան չէ թարգմանում:

Թարգմանելիք նյութի բովանդակությունը և ձեւը իր սուր-  
տին մոտ պետք է լինի:

Մենք գիտենք, գրականության պատմության մեջ,  
և ուրիշ տեսակի թարգմանիչներ, վորոնք թարգմանության  
մեջ այսպիսի խորություն չեն գտնում և թարգմանում են

ասես թե վոճական վարժութիւնն անելու համար, տարիքի  
 վոճեր, ստիւներ փորձելու համար և հասկապես իրենց վար  
 պետութիւնը և շնորհքը ցույց տալու համար: Ռուսական գրա-  
 կանութեան մեջ այսպիսի թարգմանիչ էր մուկուպին, վորը  
 հայտնի, տաղանդավոր և և վորը թարգմանում է նոյնիսկ այն-  
 պիսի երկեր, վորոնց բովանդակութեան հետ նա համամիտ է:  
 Ուրեմի հայրոնք «Նիւլթոնի կալանավորը»: Իսկ մուկու-  
 սկու կակատիպն է և երմոնտովը: Երմոնտովի հայրոնքի  
 առած թարգմանութեանն էրն այնպիսի վոտանավորներ են,  
 վորոնք շատ սերտ կաց ունեն բանաստեղծի ստեղծա-  
 գործութեան հետ և այնքան հարապատ են բանաստեղծի  
 ստեղծագործական վոգուն, վոր ոու քննադատներու վո-  
 մանք մտածել են տալիս, վոր յեր հայրոնքը չ'լինէր  
 միւրեւայն է և երմոնտովը պետք է լինէր հայրոնակա:

Հովհաննիսյանի թարգմանական գործերը նրա քննադատ-  
 ների կողմից ընդհանրապես գովաբանված են միայն մի  
 դեպք հիտենք, վոր նրա Պուշկինից առած թարգմանութեանն  
 է վերաբերում, յորք քննադատներից մեկի կողմից  
 թերագնահատվում է. նա և համարվում վոչ հազոդակ  
 թարգմանիչ: Ռեզար է ի հարկե այս վերջին կարծիքի  
 հետ համաձայնվել:

Հովհաննիսյանը մեր լավագույն թարգմանիչներից  
 է նաև վորպես Պուշկինի թարգմանիչ: Քննադատներն  
 ընդհանրապես գովել են, վոր Հովհաննիսյանն իբրև  
 թարգմանիչ աշխատում է բնագրին մոտ լինել: «Նրա  
 թարգմանութիւններն ասում են, մոտ է բնագրին» ի

հարկ է սա յել արժանիք է թարգմանի համար: Եւ այս  
այս, Հովհաննիսյանն ունի նաև մի այլ նպատակ՝ հայ  
ընթերցողի համար այս բնագիրը մատչելի դարձնելու:

Յեզ ահա այս յերկու առումով՝ բնագրին մոտ լինելը  
և բնագիրը հանրամատչելի դարձնելը ընթերցողների  
համար՝ թարգմանչին համեմատել են լարախաղաչի հետ,  
վորն աշխատում է հաշվասակչութիւն պահպանել բը-  
նագրի մէջ այդ բնագրի յուրահատուկ ըմբռման մեջ:

Գրական քննադատութեան մեջ կարծիք է յեղել, թե  
անհնարին է հարապատ թարգմանութիւն տալ, նույնիսկ  
յեղել են քննադատներ, վորոնք գտել են, վոր հարապատ  
թարգմանութիւն անհնարին է պահանջել. ասում են՝ տա-  
ղանդավոր բանաստեղծի թարգմանութիւնը սա արդե՞ծ մի  
նոր և ինքնուրույն յերկ է:

Յեզ այս իմաստով նշանավոր վիպասան Վիկտոր Հյու-  
գոն նկատել է, վոր հաճախ գեղեցիկ թարգմանութիւնը  
հարապատ չի լինում և ընդհակառակը հարապատ թարգ-  
մանութիւնը գեղեցիկ չի լինում: Ի հարկե այս կարծիքը  
հիմնականում ճիշտ չէ: Մենք ունենք բազմաթիվ լավա-  
գույն թարգմանութիւններ վոր միայն մեր գրականու-  
թեան մեջ այլև արեւմտալեւրոպական գրականութեան  
մեջ: Այսպես որինակ - մենք գրեցինք վոր գերմանական  
գրականութեան մեջ Շեքսպիրը, վորը թարգմանել է Վիլ-  
հելմ Շլիցելը, համարվում է գլուխ գործոյ և գերմա-  
նական գրականութեան պատմագիրներից մեկը, վոր  
Վիլհելմ Շլիցելը Շեքսպիրին գերմանացիների համար

շատ ավելի հասկանալի յե դարձել, քան նույն այդ նե  
 քսպիրի բնագիրը հասկանալի յե ներկայիս անգլո-աչմերի  
 համար: Այսպիսով խոշոր թարգմանիչներն աշխատում են  
 իրենց թարգմանելի հեղինակների հետ համահանձար լինել:  
 Ինչ նշանակություն ունի թարգմանական կուլտուրան հա  
 սարակական տեսակետով, վորն է նրա արժեքը, ինչու  
 բոլոր գրականությունների մեջ այնպես խոշոր տեղ է ու  
 վում գեղարվեստական թարգմանությունը: Հատկապես, յեթե  
 վերցնենք Հովհաննիսյանի թարգմանությունը մենք տես  
 նում ենք, վոր Հովհաննիսյանը ձգտում է հայ լեզուն  
 դարձնել այնքան նորր և ուժեղ, վոր կարողանա հասնել  
 թարգմանվելիք հեղինակի նրբություններին: Յեվ ապիսով  
 մեծ ջանք է գործադրում ոտար գրականության հարստու  
 թյունները յուրացնելու: Այդ յուրացումների միջոցով գրա  
 կանությունը վարգանում և ուժեղում է:

Այդ իմաստով Հովհաննիսյանի թարգմանությունների  
 արժեքն այն է, վոր վորոշ դասագիրք կազմողներ նույնիսկ  
 նրա թարգմանությունների տակ դնում են Հովհաննիսյանի  
 անունը և մոռանում են բնագրի հեղինակին: Ժուկովսկին  
 ասում է թե « թարգմանելու ժամանակ յես մրցում եմ բե  
 նագրի հետ և աշխատում եմ նրանից ավելի լավ գործ տալ»:

Այսպես ել Հովհաննիսյանն է անում մի շարք բնա  
 գրերի նկատմամբ, և պետք է խոստովանվել, վոր նա տվել  
 է համապար գործեր, հարապատ թարգմանություններ և բնա  
 գրին, վորոշ դեպքերում, նրա թարգմանությունները հավա  
 սարապոր են:

Ռուսական գրականության մեջ ժողովրդային հետ յերկրորդ խոշոր թարգմանիչը, վորն աչքի չէ ընկել նաև հայ գրողներից վորոշ թարգմանություններ կատարելով, սա վաերից հրյուսովն է: Նա վորն միայն թարգմանիչ էր, այլև գրականության խոշոր տեսաբան և այս տեսակետից, մեզ համար, շատ հետաքրքրական է նրա կարծիքը թարգմանությունների մասին: Նա գտնում է, վոր թարգմանիչը պետք է նկատի վոր միայն տալ բնագրի իմաստը, այլև գրվածքի նեվական առանձնահատկությունները, յերաժշտությունը հնչյունագրությունը: Հեղինակից պահանջվում է վոր թե բառացի ճշտություն, այլ վոր նա տա թարգմանելի բանաստեղծի տրամադրությունը: Այս կողմից շատ հետաքրքրական է վահան Տերյանի մի խոստովանությունը հրյուսովի մասին: հրյուսովն ամեն տեսակի յերկեր թարգմանելուն հասամիտ չի, և այս տեսակետից Տերյանն ասում է; վոր թարգմանող բանաստեղծը մեքենա չի, նա ձգտում է թարգմանել այն, ինչ վոր թեքը պանկանում է և նրա ախտիվությունը յերեկան է պալիս նման թարգմանություններում, նա վորպեպորվում է այնպես, ինչպես իր սեփական գործերն ստեղծագործելիս:

Այստեղ պարզ յերեկում է, վոր սխալվում են վորոշ քննադատներ, յերբ թարգմանությունները թերագնահատում են և համարում են մեքենայական աշխատանք: Մենք գիտենք, վոր բառը բառի դեմ դնելով շատ անգամ ստացվում է անհեթեթություն:

Յուրյ տալու համար, վոր հովհաննիսյանը թարգմանությունների մեջ անխտրական չի յեղել, և վորոշ մտադրություններ, վորոշ ընտրություններ է թարգմանություններ արել,

անհրաժեշտ է նշել նրա մի շարք նշանավոր թարգմանությունները, վորոնք մեր գրականության մեջ գեղարվեստական թարգմանությունների գլուխ գործույներն են, վորոշ դեպքում համարվեք բնագրին: Արիմակ - այսպես է «Յերգչի անեճքը» /Ուլանդի/: Այստեղ շատ պարզ նկատվում է թե ինչու համար է այս յերկը Հովհաննիսյանը նախաձեռնարել թարգմանության համար, ինչու հատկապես սա յե ընտրել թարգմանելու համար:

Գերմանական գրականության պատմությունից հայտնի յե, վոր Ուլանդը «Յերգչի անեճքը»<sup>2)</sup> գրել է Նապոլեոնի դեմ, այսինքն այն ժամանակ, յերբ Գերմանիան Նապոլեոնի լճի տակ եր գտնվում: Վրտանավորը գրված է 19-րդ դարի սկզբին և վորովհետեւ հեղինակը բացարձակապես Նապոլեոնի դեմ չեր կարող գրել, ասա նա գրվածքին տալիս է մի տեսակ այլաբանական իմաստ: Այնտեղ հիշատակված:

Յեվ բազմահաղթ այնտեղ նստող գոռու պղծան հողաշատ,  
Բազմամ եր յուր գահի վրա մոռալ դեճքով ու գունատ.

Այս արձան նապոլեոնն է՝

Ամեն խորհուրդն ահավիրք եր, կատաղությունն աշքերտա,  
Նորա ամեն խոսքը - կորուստ, արյուն եր նա միշտ գրում:

Ծերունի յերգիչը սա գերմանական ժողովուրդն է, իսկ մանուկ յերգիչը - ազատության գաղափարն է՝

Այս ամրոցը յերկու աչնիվ յերգիչ գնացին մի անգամ.

Մեկն ալեգորդ, մյուսը պատանի վոսկեգանգոս ու փարթամ.

Տավիղն ուսին, մի գեղեցիկ նմույց հեճամ ծերունին,

Նրա կողքին գնում եր առույց ճաղկահասակ պատանին:

Հետո շատ հետաքրքրական է թե ինչ են յերգում այս ծերու-

<sup>2)</sup> Ludwig Uhland (1787-1862) «Des Sängers Fluch».

նին և մանկատանի յերիտասարտ, նրանք յերգում են՝

Նոցա յերգն է գարուն և սեր, յերանալծա փոսկերար,  
Ազատություն, իտաք ճշմարիտ, արիության գործ արդար,  
Յեկ հեշտության ամեն վայելք, վոր հուշում է սիրտ մարդկան,  
Յեկ այն ամենն, վոր կարող է մարդուն տալ ախյ վեճության

Այսինքն, այն բոլոր, ինչվոր նախալետնի սեճիմի ժամանակ  
հաշմանքի յեր յենթարկվում: Պետք է ասել, վոր այս թարգ-  
մանության մեջ Հովհաննիսյանի լեզուն, բանաստեղծական  
արվեստը հասել է իր բարձր անտիճանին և նա կարողացել  
է տալ գրեթե բնագրին համարժեք գործ: Հետո շատ բնորոշ է  
Հովհաննիսյանի թարգմանությունների մեջ նաև լեհական գրա-  
կանությունից առած մի թարգմանություն՝ /Սիրոկոմիից/:

« Անգրագետ » վերնագրով:

Ինչպես այստեղ, նույնպես և « Յերգի ամենք »-ի մեջ  
ազատության գաղափարն է գնում ընդհանուր առումով:

« Անգրագետ »-ի մեջ խոսում է հատկապես գյուղացիության  
մասին և գյուղացիների ազատության մասին: Այս « Անգրա-  
գետ »-ը մի գեղջուկ գյուղացի, վորք տղա յե՝

Ախ, գթացեք գեղջուկ վորքես, մի լավության միայն արեք,  
Տվեք մի թերթ ինձ ճերմակ թուղթ, մի փետուր է գրիչ տվեք,  
Յեկ ինձ գրել սովորեցրեք, սովորեցրեք լավ, շուտով:

Յեկ հետաքրքրական է թե այս անգրագետ գեղջուկ վորքն  
ինչու յե ուզում գրագետ դառնալ՝

Վոր պատմելով թղթի վրա յես ճեպ ցույց տա՞մ ամեն բան-

Մե: աշխատանք, մեր շարժարանք ու մեր խաղը վկայության:

Նշանակում է, սովորում է վորպեսզի հասարակությանը պատ-

մի գյուղացիների վշտերն ու ցավերը և հետաքրքրական է թվ  
գեղջուկ վորքը գրագիտությունը ուս ձեռքին է տեսնում

Շատ լավ բան է գրել իմանալ: Գրագետ է վաշխառուն:

Գրագետ են դատարանի ծառայողներն անկշտում:

Յեռանդով եւ նորա գրում են, նույնն է դրսիսան աշխարհի:

Իսկ այդ գրելն ինչ փույթ, վոր խեղճ մարդու հոգին պիտ հանի:

Ան ամբողջապես քաղաքական պոեզիա յե ուղղված պարիպմի  
դեմ, և գյուղացիության շահերն է պաշտպանում

Շուտով, շուտով, գրիչ սվեթ, սովորեցրեք գործածել:

Կամի՞ս գրել ազգիս համար, նորա համար աշխատել:

Յեկ յեա նորան կը պաշտպանեն, շարագործից հիմարից:

Պարզ է ի պարզ շարագործից քաղաքականապես դժգո: են:

Այս քանատեղծությունն էլ Հովհաննիսյանը թարգմանել է  
վերին աստիճանի հաջողակ կերպով, կարողացել է վրտանա-  
վորին այնպիսի մի պարզություն տալ, վոր թվում է թ' սա  
մի գյուղացու տղայի մոնոլոգ է: Նույնիսկ նրա մտքերի մեջ յե-  
ղան հոգեկան ապրումներն էլ շատ հարազատ են այդ դարա-  
շրջանի գյուղացու համար:

Հետո հետաքրքրական է նկատել Հովհաննիսյանի արժեքն  
իրրեկ Պուշկինի թարգմանիչ: Մենք վերեկում ասացինք, վոր  
Հովհաննիսյանն իբրև Պուշկինի թարգմանիչ վրմանց կո: րից  
թերագնահատվել է, նրանք թերագնահատել են այն լմաստով,  
վոր Հովհաննիսյանը թարգմանել է Պուշկինի այն յերկերը,  
վորոնք ծանոթ են հայ իրականությանը, սակայն սա շատ  
անտեղի և անհիմն մեղադրանք է: Թարգմանիչը կարող է  
և ծանոթ յերկեր տալ, բայց ավելի վարպետորեն, քան  
մինչև այդ յեղանք:

Մենք գիտենք, վոր հեռօթնի « Կարգը » կա յերկու  
 Թարգմանութեամբ, վոր հարցենևի գործերից մի քանիսը կան.  
 մի շարք Թարգմանութեամբ, այնպես վոր այս տեսակեալ գրա-  
 կանագիտական տեսանկյունով վոր մի քննադատութեան շի դի-  
 մանում: Հովհաննիսյանն իբրև Պուշկինի Թարգմանիչ այն խոշոր  
 արժեքն ունի, վոր նա հայայրել է Պուշկինի հատկապես այն  
 վոտանավորները, վորտեղ Պուշկինը խոսում է արվեստի և  
 արվեստագետի մասին: Յեղ սա իբրև թեմա Հովհաննիսյանի  
 սրտին շատ մոտ է յեղել, վորովհետեւ ինքը Հովհաննիսյանը  
 հայ բարձուական քննադատների կողմից, մանավանդ վերջին  
 շրջանում, բազական մոռացութեան եր մատնված և նրա  
 անունը սիրով շեյին տալիս:

Հետաքրքիր է իմանալ թե ուրիշ ինչ հեղինակներից է  
 Թարգմանութեան կատարել Հովհաննիսյանը: Պետք է հիշա-  
 տակել, վոր նա Թարգմանել է նաև Նարսոնից և Նարսոնի  
 այնպիսի յերկերը, վորտեղ վոր նա խոսում է դարձյալ բանաս-  
 տեղծի կողման մասին, կամ Նալբանդյանի պես հայտնում  
 է, վոր նա ամբողջապես չի կարող սիրո պայմաններն նվիր-  
 վել: Թարգմանել է նաև ռուս բանաստեղծ Պլեշչեկից, Թարգ-  
 մանել է Հայնեյից: Պետք է ասենք, վոր բոլոր հեղինակ-  
 ներից առանձ յերկերն իրար հետ կապված են վորոշ քեմո-  
 կրատական տողերգասիրական տրամադրութիւններով և վար-  
 մանալի չէ, վոր Հովհաննիսյանը նույնքան քրտնազան աշ-  
 խատանք է թափել իր Թարգմանութիւնների վրա, ինչպես  
 իր ինքնուրույն ստեղծագործութեան վրա. նա թեթև վերա-  
 բերմունք չի ցույց տալիս դեպի Թարգմանչական գործը, վորը  
 ծրանից հալասարալի ուշադրութիւն է պահանջել:

Հովհաննիսյանը թարգմանել է նաև արևակ գործեր,  
հասկանալի գրամատիկական լանդիպ:

1905 թվի հեղափոխությունից հետո, յնք սկսվեց  
աեակցիան, Հովհաննիսյանը թարգմանեց այս գրամատուրգ  
Յուշկեվիչի «Թագավորը»: Յուշկեվիչը ուսսական գրականու-  
թյան մեջ մի մանր բուրժուա դեմոկրատ է վորն իր գործի  
մեջ աշխատում է կարեկցություն զարթեցնել դեպի աշխա-  
տավորությունը: Նա արմատական միջոցներ, հեղափոխական մի-  
ջոցներ առաջարկող չի, ալեւի շուտ նա պասսիվ մարդա-  
սիրություն քարոզող է: Իսյ կարեվորն այնքան թարգմանու-  
թյունը չէ, այլ այդ թարգմանության առաջաբանը, վորը  
գրել է Հովհաննիսյանը: Նա իր Յուշկեվիչի «Թագավորի» առա-  
ջաբանի մեջ, թե՛ Շեկսպիրի «Համլետի» հայերեն թարգմա-  
նության քննադատությամբ և թե՛ առանձնապես իր թարգման-  
չական պրակտիկայում ալեւի է գեղարվեստական թարգմանու-  
թյան մի ամբողջ թեորիա: Նա յեղել է վոր միայն սոսկ թարգ-  
մանիչ, այլ և թարգմանության տեսաբան թեորետիկ:

Ձեզ այս իմաստով մեզ համար այսոր վոր միայն ուսա-  
նելի յեն Հովհաննիսյանի թարգմանությունները, այլ և շատ  
դեպքերում նրա տեսական հայայքները գեղարվեստական  
թարգմանության վերաբերյալ:

Նա ինքը գիտակցաբար գործադրել է վորոշ սկզբու-  
ներ: Այս սկզբունքները նա բաղել է վոր միայն հայերեն  
թարգմանչական գրականության պրակտիկայից, այլ ընդ-  
հանրապես ուսսական և կրեվմուս-Յեվրուպական գրականու-  
թյան թարգմանությունները նկատի առնելով:

Հոգեաննորոյանը կարծում է, վոր ամեն մի թարգմանիչ այնպէս պետք է աշխատի թարգմանելիք յերկի վրա, ինչպէս իր ինքնուրույն ստեղծագործութեան վրա: Թարգմանիչը պետք է աշխատի տալ մի գործ, վորն իր արժեքով համահավասար լինի բնագրին և այս գործը կատարելու համար Հոգեաննորոյանը պահանջում է, վոր թարգմանիչը պետք է վոչ թէ ստրկանա բնագրին, այլ ավելի ազատ վերաբերմունք ցույց տա դեպի նա:

Որինակ, նա Շեքսպիրի թարգմանութեան մասին խոսելով, գրտնում է վոր անգլիական մի քանի առաքիներ, և ասածվածքներ, մեր ժողովրդի համար՝ անհասկանալի յեն և պահանջ է դրնում, վոր սրանք այնպէս թարգմանվեն, վոր այս թարգմանութեան մեջ ոգտագործվի նաև հայ ժողովրդի «բառն ու բանը»: Այսինքն թէ վորոշ անհասկանալի դարձվածքներ, առածներ, ասածվածքներ պետք է հայայնել, տեղայնացնել: Յեվ վոչ միայն սոսկ ասածվածքների, այլ նաև նա նույն վերաբերմունքն ունի պատկերավորութեան նկատմամբ. պետք է աշխատել պատկերավորութունն էլ տեղայնացնել: Իհարկե չի կարելի ասել, վոր Հոգեաննորոյանը այս պահանջները դնելով իր գործը չի համարում թարգմանութեան: Նա ասում է, վոր թարգմանութեանը պետք է լինի թարգմանութեան և բնագրին շփապանց հարապատ:

Ասում է, վոր պետք է բնագրի վոգրին ըմբռնել և նրան շփապանց հարապատ մնալ և վոչ միայն բառերի իմաստով մնալ հարապատ, վոչ թէ հետեվել բառական հաջորդականութեանը:

Յեվ ասա նա իր թարգմանութեաննորոյան մեջ նույնիսկ ոգտագործում է մեր բառքաները, այն բոլոր գեպքերում, յերբ ոտար բնագրի մեջ հանդես է գալիս ժողովրդական հերոսը, բանաս-

տեղին նրան խոսեցնում է թեր փոքր քաղաքով, փոքր-  
 չի իրականությանը հարապատ ծնա: Նույն ձևի Թարգմանիչների  
 է նաև Տիգրան Հովհաննիսյանը, փոքր Թարգմանիչ է Տալատյի  
 «Հարուսթյուն» վեպը:

Այս պահանջը դնում է և Մարտիոս Գորգիս, փոքր յերբ նե-  
 դիմակն ինքն է խոսում, պետք է խոսի մաքուր լեզվով, խոս յերբ  
 հերոսներն են խոսում, կարող է նրանց պրոչյի մեջ, դիպուկու-  
 թի մեջ՝ բարբառ ոգտաբարձել, փոքր է ետև մեր իրականու-  
 թյան մեջ այդպես է կանարդում բազմ բարբառը պետք է լինի  
 մշակված, այնպես մշակված, փոքր պսուն յերձվա, ինչպես որինակ,  
 մուրացների «Առաքյալ»-ի մեջ:

Հետո Հովհաննիսյանը պահանջում է, փոքր պետք է յեր-  
 կու լեզվին ել հալասարարակ տիրապետել: Թե՛ այն լեզվին, փոքր  
 փոքր Թարգմանություն պետք է արվի և թե՛ այն լեզվին, փոքր  
 պետք է Թարգմանի: Վոր հաճախ, յերբ միայն մայրենի  
 լեզուն են իմանում և շե՛ն տիրապետում Թարգմանիչիք գրքի  
 լեզուն՝ իմաստը երկու չի ստացվում: Թարգմանիչը պետք է յերկու  
 լեզուն ել լավ իմանա: Կեցուն պետք է սուգորել փոքր միայն  
 գրքերից, այլ և բանձնոր լեզվից: Պետք է պրոչյներից սուգո-  
 թել և արձանը վարժեցնել: Թարգմանական հայ լեզվի մասին  
 Հովհաննիսյանը այն կարծիքն է հայտնում, փոքր «Ե՛ր գրա-  
 կան լեզուն պետք է իր շորացող յերակները, Թարգմանի ժո-  
 շուրդական արյունով»: Մի կարծիք, փոքր արտահայտել է և  
 Թումանյանը շատ ու շատ անգամ:

Հետո բանաստեղծական Թարգմանություն մասին Հովհան-  
 նիսյանը պահանջում է, փոքր քառյակը տող-տող չպետք է

կարգաւ ու թարգմանել, այլ պետք է քառյակն ամբողջութեամբ  
 կարգաւ, նույնիսկ միեւնեւ անգիր անելու շատ, հետո, յերբ  
 թարգմանիչն ընթանում է հեղինակի իդեան, արտահայտչական  
 ձեւերը, նա կարող է արդեն թարգմանել: Նա ուլ տողետող է  
 թարգմանում, կոչվում է ստրկական թարգմանիչ:

Հոլհաննիսյանն իր այս թեորիան, վորք պաշտպանել է  
 իր քննադատական հոսովանների մեջ, բազական ճշտութեամբ  
 կիրառում է իր թարգմանութեանների մեջ: Այսինքն նա վոր միայն  
 խոսում և քարոզում է, այլ և իր գրական աշխատութեանների  
 մեջ այդ թեորիաներն ոգտագործում է: Արի՛նակ, մենք տեսանք  
 թե «Անարագետ»-ի մեջ այդ լեհական գեղջուկի լեզուն, վորք  
 վորքան հարստատ է հայ գեղջուկի համար: Մենք կարող  
 ենք սրա նկատմամբ ասել, վոր նա կարողացել է հաջող կեր-  
 պով տեղայնացնել:

Նա իր թարգմանութեանների մեջ պահպանում է հեղի-  
 նակի ստիլը և ամբողջ իմաստը, նրա իդեոլոգիական ֆորմը  
 հարազատորեն: Բայց դրա հետ միասին նա ոտար բովանդա-  
 կութեանը տալիս է ազգային ձև:

Հոլհաննիսյանն իբրև թարգմանիչ խսկապես ոգտագործել է  
 Պուշկինի տրագիկաները, վոր միայն Պուշկինին իբրև թարգմա-  
 նիչ, այլև փոխարող-Պուշկինին: Պուշկինը վորպես փոխարող  
 շատ հարստատ է մնում այդ լեզվին, վորից նա փոխ է առ-  
 նում կամ նմանվում: Արի՛նակ «Քարե հյուրի» մեջ, յերբ  
 իտալանական ժողովրդի մասին է խոսում, աշխատում է իտալա-  
 նական ժողովրդի սովորութեաններին, ֆուկլորին, կուլտու-  
 րային հարստատ մնալ: Երբ Պուշկինից է փոխարողութեան

կատարում, աշխատում և արաբական կուլտուրային հարստացում  
 մնալ, կամ յերբ հաշկանյան սլավոնների մասին և գրու-  
 կամ փոխադրում, աշխատում և նույնպես հարստացում մնալ սլա-  
 ժողովրդի կուլտուրային, նրա սովորություններին: Այս և պատ-  
 ճառը, վոր հրյուսուվը ասում է, վոր Պուշկինը վոր միայն որս  
 գրող է և ուսական գրականությանն և հարստացում, այլ և բոլոր  
 յերկրների ժողովուրդներին, վորոնց մասին նա խոսել է:

Եւսվ թարգմանիչը այս կերպարանափոխության արանձ-  
 նահատկությունը պետք է ունենա, շփոթանելով իր ինքնուրույնու-  
 թյունը: Պուշկինը յերբ կերպարանափոխվում է, իր թարգ-  
 մանությունների մեջ, այնուամենայնիվ նա մնում է՝ որս,  
 մնում է վորպես Պուշկին և միաժամանակ կարողանում է  
 լինել միջազգային Պուշկին: Նա միության մի շարք ժողո-  
 վրդների համար նույնքան հարստացում է, վորքան որս ժողովրդի  
 համար. վորովհետև նա կարողանում է և կերպարանափոխվել,  
 և մնալ ինքնուրույն:

Պետք է խոսել հատկապես Հովհաննիսյանի մի թարգ-  
 մանչական գործի մասին, վոր սկսել է, բայց չի աւարտել.  
 դա Հոմերոսի «Իլիադանն» է: Հովհաննիսյանը գիտեր հու-  
 նարեն լեզուն, նա կարդացել է հունաց գրականության  
 պատմության դասեր: Հույն կուլտուրային լավ ճանոթ է,  
 նա ուսումնասիրել էր Հոմերոսի այս աշխատությունը:

Սակայն այդ աշխատանքը նա չավարտեց: Այստեղ շատ  
 կարեւոր է նրա կենսագրության մի հանգամանքը նկատի  
 ունենալ. դա այն է, վոր Հովհաննիսյանը շարունակաբար նյու-  
 թական ներդրում մեջ է յեղել: Նրա համար ճանր է եղել

Դաշնանդամ ընտանիքը կերակրելը. այս ընտանիքի հոգսը միշտ նրան նեղել է. այդ մասին նա գրում է իր նամակներում իր մտերիմ ընկերներին, վոր « Յերեխաներս հայ են ուզում, վոր գրականությունն ինձ համար միշտ էլ յեղել է յերկրորդական պլանի վրա »:

Յեվ ահա այնպիսի մի լուրջ գործ, ինչպիսին է « Իլիականի » թարգմանությունը՝ նրանից պահանջում էր նյութական ապահովություն: Այս առթիվ նա մի քանի անգամ պահանջ է դրել կովկասի հայոց Հրատարակչական ընկերության վարչության առաջ, վորպեսպի յերկու յերեք տարի իրեն նյութապես ապահովեն այս աշխատանքը կատարելու համար: Պետք է ասել, վոր նրա պահանջն էր տարեկան 3000 ռուբլի՝ այսինքն ընդամենը 3 տարվա համար 9.000 ռուբլի, վորպեսպի կարողանա իր աշխատանքը թողնել և այս մեծ գործով զբաղվել:

Այդպիսի հնարավորություններ տալու դեպքում միայն հնարավորություն կունենար աշխատելու, բայց վոր վոր նրան այդ հնարավորությունը չտվեց, իսկ այդ ժամանակ նա եղմիաճնի սինոդում ատենադպիր էր և հնարավորություն չունեի աշխատանքից հեռու, յերբ հոգնած վերադառնում էր տուն, այդպիսի լուրջ գործ կատարելու: Իր նամակներից մեկում յերեկում է, վոր նա դժգոհ է յեղել եղմիաճնի միջավայրից, նա հեշտույնամբ չէր կատարում այդ աշխատանքները:

Հովհաննիսյանն այն ժամանակ պարզ է պարզ

դնում եր գրողի համար նպատակաւոր, պայմաններ ստեղծելու խնդիրը: Մի խնդիր, վորը լուծվեց միայն Խորհրդային Խոշտանութայան որոք, և լուծվեց բովանդակաւոր կերպով: 1908 թ. Երաստարակվեց նրա յերկերի ճողովածուէ, նա ասում է « Այսոր ել / 1910թ/ պատրաստ եմ յերկու տարի առաջ տպագրված վոտանավորներին ճողովածուն բախակաւներին փթերով ձարելու »:

Աւրիշ խոսքով նա գտնո է, վոր ինքը հնարավորութուն չունի իր ճողովածուներն սպառելու և մյուս կողմից վոր այդ հանգամանքը թույլ չի տալիս նրան գրականութայամբ զբաղվելու: Այսինքն դնում է այն խնդիրը, ինչ վոր Մուրապանն է դրել ասելով, վոր հաշվապահ լինելով և հաշվապահական գրքեր լսնելով՝ հայ գրականութայան հարստացմանը հարվածել է:

Հովհաննիսյանը յնչս իր կյանքի վորոշ մասն անց է կացրել եղմիածնի սինդի համար գրաբար արձանագրութուններ կապելով: Յէթե նրան ապահովելին՝ նա կարող եր ինքնուրույն, ինչպես և թարգմանական մի շարք աշխատութուններ տալ: Նրա ունեցած թարգմանչական ունակութունները բոլորիս ել հայտնի յեն: Նա կարող եր վոր միայն Համերոսը թարգմանել, այլև հունական կլասիկ գրականութայան հեղինակներից շատ շատերին, վորոնց նա լավ գիտեր, ինչպես որինակ՝ բանաստեղծ Սաֆոյի գործերը, վորը նա սկսել եր թարգմանել բայց նորից չի ավարտել:

VI

Վերջին խնդիրը, վորը պետք է շոշափենք, սա նրա կրած և թողած ապրեցություններն են: Մենք տեսանք, վոր Հովհաննիսյանն սկսել է գրել շատ շուտ, 14-15 տարեկան հասակից: Բնական է, վոր նա այդքան շուտ գրել սովորելով, պետք է անցներ վորոշ ուսումնառության / ԿԿՕԵԱ / շրջան: Ինչ է նշանակում գրական ուսումնառություն: Սա նշանակում է, վոր հեղինակը նախ քան իր սեփական ինքնուրույն ստեղծագործությունները տալը, սովորում է նշանավոր հեղինակներից:

Սա շատ հասկանալի և բնական յերեվույթ է: Նախ քան սեփական ստեղծագործություններ տալը պետք է աշակերտել, փոխ առնել: Ուսուցիչ լինելուց առաջ՝ պետք է աշակերտել:

Ես այ պետք է ասենք, վոր Հովհաննիսյանը սովորելու հետ միասին, ապրեցությունների տակ լինելու հետ միաժամանակ շատ ինքնուրույն հեղինակ է յեղել: Նա իր փոխ առաջը յուրացրել է այնպես, վոր այդ ոտար փոխառությունը ցույց տալն այսոր դժվար է լինում. այսինքն նա փոխ առնելով՝ դառնում է ինքնուրույն հեղինակ:

Այստեղից հարց է առաջ գալիս, յերե վերջնելով յուրացնում է, ինքնուրույն է դարձնում, ապա ել ինչ կարիք կա նրա կրած ապրեցություններն ուսումնասիրել և այդ մասին խոսել:

Գրական քննադատության մեջ կա տեսակետ,

վոր ժխտում է գրական ազդեցության յերեվոյթը: Ասող-  
ներ են յեղել, վոր մի հեղինակի ազդեցություն մյուսի  
վրա շատ անհնարին է: Ասում են յերկու հեղինակ-  
ների նմանության դեպքում, նրանց միջազայրերն են  
նման: Յեզ վերջապես յերե մի հեղինակ այս կամ այն  
հեղինակների ազդեցության տակ տալիս է իր ինքնու-  
րոյն ստեղծագործությունը, ինչպես կարելի յէ այդ  
ազդեցության մասին խոսել:

Բայց այս տեսակետը սխալ է, վորովհետև նույն-  
իսկ իրենք հեղինակներն իրենց հիշողությունների  
և նամակների մեջ խոստովանվում են իրենց նկատ-  
մամբ, այս կամ այն հեղինակի բարերար ազդեցության  
մասին:

Հեղինակների այս խոստովանությունը մեզ համար  
նշանակություն ունի: Հայ հեղինակների կրամ ազդեցու-  
թյան մասին Յուրի Վեսիլովսկին հրատարակել է մի  
ամբողջ գիրք « Ռուս գրականության ազդեցությունը  
հայ գրողների վրա » վերնագրով: Այս գրքի մեջ նա  
տվել է Հովհաննիսյանի և մյուս նշանավոր հայ հեղի-  
նակների խոստովանությունները:

Հովհաննիսյանն իր նամակի մեջ, գրված Յուրի  
Վեսիլովսկուն, խոստովանվում է թե ինչպես իր վրա  
ազդել է ռուս գրականությանը:

Խոստովանվում են նաև այնպիսի հեղինակներ,  
ինչպիսիք են՝ Գ. Առնդուկյանը, Ղ. Աղայանը, Նար-դ. Ը,  
Շիրվանչաղեն: Նշանավոր գրող Գյոթեն խոստովա-

վում է գրական ազդեցության յերեվոյթը: Գյործն հայտնում է թե՛ ինքը սովորել է թե կյանքից և թե գրքերից: Գրական ազդեցության յերեվոյթը հիշատակել է նաև Վոլտերը: Նա ասում է « Կամեն մեկը իր ողջախը վառելու համար, կրակը վերցնում է այստեղից կամ այնտեղից »:

Այժմ գալով Հովհաննիսյանի ուսուցչի խնդրին, պետք է ասենք, վոր անպայման առաջին տեղը պատկանում է Սմբատ Ծահապիպին: Սմբատ Ծահապիպը յերել է Հովհաննիսյանի դպրոցական ուսուցիչը:

Հովհաննիսյանը սիրել է Սմբատ Ծահապիպին և նրան նվիրել է վոտանափորներ: Առաջին հերթին Հովհաննիսյանն զրափել է Ծահապիպի մաքուր հայերեն լեզուն: Մինչև իր կյանքի վերջն էլ Հովհաննիսյանն ան համոզմամբ էր, վոր 60-ական թվականների հայ հեղինակների մեզ ամենից լավ լեզու ուներ Սմբատ Ծահապիպը. նա գտնում էր, վոր այդ լեզուն է, վոր մենք գործ ենք անում այսօր:

Այս կարգիքի սխալը կայանում է նրանում, վոր նա այսպիսով թերագնահատել է Միքայել Նալբանդյանի նշանակությունը և բնորոշ է այն տեսակետից, վոր նա իրեն շատ կապված է համարում Ծահապիպի հետ:

Առաջին անգամ ասում է՝ « Յես նրա բերանից լսեցի հայ բարբառը »: Բայի մայրենի լեզվից Հովհաննիսյանին զրափել է նաև Ծահապիպի ստեղծագործությունների մի այլ բաժինը. սա նրա այն յերգերն են,

վորունք կարող են արտահայտում գեպի հայրենիքը:

Շահագրգիռ շատ ուժեղ կենդանի յերգել է Արարատ-  
յան դաշտի բնութայունը, յերգել է հայրենի Աշտարակ  
գյուղը. վերջապես յերգել է կովկասյան սարերի բնու-  
թյունը: Այս բոլոր յերգերի մեջ Շահագրգիռ բնական-  
նաչափ տաղանդ է ցուցաբերել: Յեզ պետք է ասենք,  
վոր Հովհաննիսյանն իր ուսուցչի յերգերի մեջ բա-  
վականաչափ արժեք է գտնում: սրանց նմանվելու  
համար: Հովհաննիսյանի ու իմ հայրենիքը տեսել ես,  
ասա՞ պետք է ասել, վոր այս վտանանավորը մի  
շարք կետերի մեջ Շահագրգիռական բնույթ ունի:

Իհարկե, Հովհաննիսյանին խորթ եր Շահագրգիռ  
քնարի վորոշ տենդենցները: Նա Շահագրգիռն համարում  
է լուսավորության գործիչ: Նրա յերգերի այս կողմն  
եր նա դրվա՞տում: Իսկ ձևի, մաքուր լեզվի, վտա-  
նավորի յերաճառության տեսակետից Հովհաննիսյանի  
քնարի մեջ մի շարք հատկություններ կան, վոր  
ուղղակի կարելի յե ասել, թե Շահագրգիռն է վերցրել:

Շահագրգիռ հետո Հովհաննիսյանին կարելի յե  
կուպել և զամառ Քարթիպայի հետ: Բայց պետք է  
ասենք, վոր բուրժուական քննադատները շատ ավելի  
շեշտակի յեն դնում այս խնդիրը և աշխատում են  
ցույց տալ, վոր Հովհաննիսյանը զամառ Քարթիպայի  
հարապետ աշակերտ է: Կարծում ենք, վոր Հովհան-  
նիսյանի և զամառ-Քարթիպայի միջև մի քանի  
նմանություններ կան և դժվար է այս նմանություն-

ներք ժխտել: Արինակ, «Տղմուտը և «Երազար» այս յերկու քանաստեղծութիւնների մէջ նման շատ գծեր կան, բայց իհարկե սա վճռական չի, վորովհետև յերկուսի գեղարվեստական հասարակական դեմքը բոլոր կետերում չեն համընկնում:

Հովհաննիսյանը քանաստեղծութիւնն է նվիրել նաև Գամառ-Քաթիպային և պետք է ասենք, վոր ինչպես ինչպես Շահապիին, ա՛նպես էլ Գամառ-Քաթիպային Հովհաննիսյանը քաջատրում է իր սեփականութիւնով, կամ նրա ստեղծագործութիւնների այն մոտեցումներն է գովաբանում, վորն իրեն համար համակրելի յեն և աչքաթող է անում մյուս փաստերը: Արինակ, նա Գամառ-Քաթիպային հարգում է, բայց նրա ազդեցիկ-մարտական նպիտակիւմը՝ չի ընդունում: Նրան էլ լուսավորութեան գործիչ է համարում, և նրան առաջարկում է յերգել աչնիվ յերգեր: Դարչ է, վոր նա Գամառ Քաթիպային քաջատրում է իր ըմբռնումով: Նրան ազատու է կամ զեպոքացնում, շովինիստական, նպիտակիստական յերգերից:

Յերկու տեղիւնակներից՝ Գամառ Քաթիպայից և Շահապից Հովհաննիսյանի տարբերութիւնն այն է, վոր նա ժողովրդական յերգիչ է: Կառքաւները, ժողովրդական քանաստեղծութիւնը, շատ անգամ չափով ոգեազդուծել է և իր մի շարք յերգերը այնպես է գրել, վոր ժողովուրդը այս յերգերը հաս-

մարում է իր սեփականը: Յեզ նույնիսկ Շահապիզը  
նրա ժողովրդական քնարը չէր հասկանում, վոր  
միայն չէր հասկանում այլ հակադրում է այս քնարին:

Այսպես որինակ մենք տեղեկութուն ունենք  
վոր Շահապիզը Հովհաննիսյանի «Աղուղ» բանաս-  
տեղծութեան ձեռագիրը կարգալույս հետո ասել է  
«Գռեհիկ բան է»: Այն «Աղուղը» վոր մեր գրակա-  
նութեան լավագույն կտորներից մեկն է, Շահապիզը  
համարում է գռեհիկ բան:

Ուրեմն Շահապիզը չի հասկացել Հովհաննիսյա-  
նի քնարի ժողովրդայնությունը, այսինքն այն, ինչ վոր  
մեզ համար Հովհաննիսյանի մոտ ամենաթանկագինն է.  
ուրեմն այս ժողովրդայնությունը Շահապիզի համար  
համար յեղել է անարժեք:

Այս յերկու բանաստեղծներից բացի Հովհաննիս-  
յանի գործերի մեջ կապ է պահպանում և միջնադար-  
յան բանաստեղծների հետ: Հովհաննիսյանի առա-  
ջի քննադատները շատ էիշտ կերպով նկատել, և  
հրյուստվն են այս բանը շեղուել է, վոր Հովհաննիս-  
յանի ստեղծագործությունների մեջ համարձակ վե-  
րաբերմունք կա դեպի կինը յեզ սրանով նա նման-  
վում է միջնադարյան յերգիչներին:

Հովհաննիսյանը յերգում է սիրուհու մարմնա-  
կան առանձնահատկությունները: Նրա մաշտերով կու-  
վելը իր համար անմահություն է համարում: !  
համարձակ շարիխները մենք տեսնում ենք նաև միջ-

Նազարյան յերգիչների մոտ, դարաշրջանի պայմանները  
 նկատի առնելով: Շատերի մոտ կարելի յե տեսնել  
 վորոշ հեզնական վերաբերմունք դեպի գրիտունեական  
 հավատը, կամ ավելի շուտ առկա չի միտք կաշկան-  
 դող միտքիցիւմը: Անպես որինակ բանաստեղծներից  
 մեկը իր սիրուհուն անվանում է « ցավ փարատող  
 խաչ »:

Եւսի միջնադարյան յերգիչներից, պետք է ասենք,  
 վոր Հովհաննէսիսյանն էլ խոստովանվել է Յուրի վես-  
 լովսկուն գրած նամակի մեջ, թե ինքն սկսում արդ  
 վել է Բայրոնից և Հայնեյից կամ ավելի ճիշտ նրանց  
 հարել է. հետո շատ տարվել և սիրել Պուշկինին:

Յեվ իսկապես իր սիրո յերգերի մեջ անսնակ  
 բանաստեղծ Հովհաննէսիսյանն այս խոշոր բանաս-  
 տեղծներին հաշվի յե առել և նրանցից սովորել է:

Պետք է Պուշկինի հետ միասին հիշատակել  
 նաև Լեոնովսկին և Նազսունին:

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր ինքը Հով-  
 հաննէսիսյանը չի միտնել արդեցութեան փաստը: Մենք  
 տեսնում ենք, վոր հենց իր խոստովանութեամբ մի  
 արք հեղինակների անուններ է հիշատակում, բայց  
 վերջ ի վերջո հեղինակն իր բոլոր կարգացած հեղինակ-  
 ների արեցութեան տակ լինել չի կարող. նա աշակերտ  
 է մնացել Պուշկինին: Յեվ իսկապես Պուշկինի ստեղ-  
 ճագործութեանները, նրա թարգմանչական անողանդի  
 և Հովհաննէսիսյանի թարգմանչական ու ստեղծագործա-

կան տաղանդի մեջ նմանութեան գծեր շատ կան: Յեղ  
 ուրեմն գրական ազդեցությունն ուսումնասիրելով՝ մեզ  
 համար պարզվում է հեղինակի տաղանդի շափը, վո-  
 ղակը և նրա ստեղծագործական լաբարատորիայի հի-  
 նարազորությունները: Այսպես որինակ՝ ինչով է նա  
 կապված Հայնեյի Սարկազմի և Բայրենի «Համաշխար-  
 հային վշտի» հետ: Նրա ստեղծագործությունն մեզ չկա  
 Հայնեյի Սարկազմը և Բայրենի «Համաշխարհային  
 վիշտը» (Weltschmerz): Ուրեմն և պարզ է, վոր նա  
 իր կարգապահ հեղինակներին չի ստրկանում, ամեն  
 մեկից վերցնում է այն, ինչ վոր հարապատ է իր  
 ստեղծագործությանը, իր տաղանդին: Այսպես լինելով՝  
 նա մնացել է մի բավականաչափ աշքի ընկնող գեղար-  
 վեստական դաստիարակ, վորի ստեղծագործությունները  
 յերկար ժամանակ մնացել են դասագրքերի մեջ, լե-  
 ցու են սովորեցրել և վորոշ գաղափարներ տարա-  
 ծել: Հենց որինակ. Հովհաննիսյանի այն կարծիքը,  
 վոր նա ավելի շատ խաղոր արժեք է տալիս ժողո-  
 վրդական, բանաստեղծությանը՝ ֆոկլորին վերջի  
 վերջո ցույց է տալիս, վոր Հովհաննիսյանը շատ  
 ավելի սովորել է մեր ժողովրդական բանաստեղծու-  
 թյուններից, անգիր բանահյուսություններից, քան  
 այս կամ այն հեղինակից:

Գալով այն խնդրին, թե նա ինչ ազդեցություն  
 է թողել մեր գրականության վրա, պետք է ասենք՝  
 ինչպես վոր Հովհաննիսյանը նահապարհի շարունակական ազդեցություն է

յակերուն և յեղել, այնպես եւ Ավետիք Իսահակյանը  
 յեղել և Հովհաննես Հովհաննիսյանի դպրոցական աշա-  
 կերսը: Յեւ ինչպես վոր Հովհաննիսյանն և յերախտա-  
 գիտությամբ հիշում իր ուսուցչին, այնպես եւ Ավետիք  
 Իսահակյանն և հիշում իր կապը Հովհաննես Հովհան-  
 իսյանի հետ, և խոստովանվում և նրա բարերար ազ-  
 դեցութիւնը իր աշխատութիւնների վրա: Հովհաննես  
 Հովհաննիսյանի մոտ Ավետիք Իսահակյանին ամենից  
 առաջ դուր և գալիս Հովհաննիսյանի ժողովրդայնութիւ-  
 նը, նրա այն կարծիքը, վոր մեր քանաստեղծութիւնը  
 պետք և անվի ժողովրդի բարեւոյնի:

Հովհաննիսյանի վերաբերմունքը դեպի բառբանի  
 ոգտագործումը՝ իր գրական շտեմարանը հարստացնե-  
 լու համար, այս եւ նշանակութիւն ունի Իսահակյանի  
 համար, վորն այնպես ուշադրությամբ դիմում և մեր  
 բառբաններին: Վոր միայն վտանավորների մեջ, այլ  
 և արձակ գրվածքների մեջ, ինչպես որիմակ «Ռուսա  
 Վարդում»:

Հետո սիրո յերգերի մեջ եւ Հովհաննիսյանից ստ-  
 վորել և: Իայց այս բոլորով հանդերձ պետք և ասել,  
 վոր Իսահակյանը մի որիգիմալ քանաստեղծ և այս  
 բոլորով հանդերձ նա հանդիսանում և մեր գրականու-  
 ման մեջ շատ ինքնուրույն հեղինակներից մեկը:

Պետք և ասել, վոր Ծառուբյանը ևս իր գրական  
 գործունեության սկզբնական շրջանում վորոշ շահով  
 աչքի առաջ և ունեցել Հովհաննիսյանի լեզուն, և նրա

տաղաչափական արվեստի բոլոր նորութիւններն զ-  
 տագործել է: Տաղաչափական արվեստի այս վաւերաց  
 ժամանակի համար ճանաչել է իբրև ուսումնասիրու-  
 թյան աղբյուր: Ետագայում այս բոլորից բացի, Շա-  
 առայանը հազիւ յէ առել նաև նրա բանաստեղծու-  
 թիւնները՝ սիրո, ճողովորդական և պատմական կյանքին  
 վերաբերվող թեմաներով:



ԳԻՆԸ 2 ՈՌՏԻՔԻ 20 ԿՈՊԵԿ

891.99 (09)

Ջ - 54

[In]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0067591

2227